



2004

1741

1094-44

U-99

Printed in Turkey

25

ԻՆՆՕՐԵԱՅ

ԿՐԹՈՒԹԻՒՆ

Ի պատրաստութի տօնի

Ամենա՛ք սրտի տն մերոյ

Յ՛սի ք՛սի .

Յաւելուածով մտածութի միոյ վը
առաջին ուրբաթի աւուրց ամ
ամսոց :

Եւրոպիայի Սոփիանայի Աւստրիական
Գործարան, եւ Եւրոպիական Սոփիանայի
Սոփիանայի Գործարանի Սոփիանայի
Եւրոպիական Գործարանի :

5528-5X
55-8255

Ի ՎԵՆԵՆ

Ի Մատթարեան Տպարանի :

1 8 2 6 :

241+264

Ն Ե Ր Ը Ն Օ Ո Ւ Թ Ի Ի Ն

Իննօրեայ իրեն-լեւանս :

Թէ որ մէկը աղէկ բնութի, աղ-
ւոր առաքինութիւն, ու գերազանց
սրբութիւն ունի, հարկ է՝ որ աղէկ
սիրտ ալ ունենայ, ու իր աղէկու-
թիւնը ուրիշին ալ հաղորդելու ջա-
նայ. * Սարգ Բարե՛ն Բարե՛ն Գանձոց
սրբե՛ն իւրոյ Բղէն զԲարե՛ն ॥ (Ղուկ .
իլ. 45 .) Իմ . աղէի՛ն Տարսը՛ն իր սրբե՛ն
աղէի՛ն Գանձե՛ն աղէի՛ն-լեւն իր Բղէնայ :
Ըպա և՛ս առաւել մարդն անձ ան
մեր յս քս, որ նոյն ինքն բարութի
ու սրբութի է, որ յատկապէս ա-
սոր համար աշխարք եկաւ, ու մար-
դոց բարիք ընելու համար հետեւ-

նին կենցաղաւարեցաւ, պէտք է՝ որ
աղէկ սիրտ ալ ունենայ, ու իր աղէ-
կութիւն ուրիշին ալ հաղորդելու ջա-
նայ : Աւստի ի՞նչ բան կրնայ ըլլալ,
որ ասանկ աղէկ ու բարերար սրտին
ջերմեռանդները՝ իրմէն յուսալու
կարող չըլլան :

Աս յոյսը ունենալու առաջին պատ-
ճառը, նոյն իսկ յնի քսի ան մերոյ
սիրական սրտին բնութիւնն է : Ար-
դեօք մէյմը մտածե՛րես, թէ յնին
սիրտը ի՞նչ է : Կարգ եղած այ սիրտն
է. անանկ սիրտ է, որ բանին այ
անձին ու անութե՛ր հետ անձնաւորա-
պէս միաւորուած է : Այա ուրեմն որ-
չափ որ նոյն իսկ բանն ան մեզի հա-
մար ՚ի յաւիտենից անսահման սի-
րով բորբոքած է, սիրտն ալ նոյն
անսահման սիրոյն ազդեցութիւներո-
վը կատարելապէս ու անչափապէս
բորբոքած ու ամեն կողմանէ վառ-
ուած է. ու աս սիրոյն պատճառովն
է, որ բանն անձ՝ մարդկան զաւկը-

ներուն հետ կենցաղավարելու՝ ու ա-
 նոնց պէս մարդ մը ըլլալու համար
 աշխարք գալու հարկադրեցաւ: Ա-
 նանկ սիրտ է, որ յսի քսի ամենապ
 հոգիին սրբազան ու գերազանց բաղ-
 ձանքներուն նիւթական ու զգայա-
 կան գործիքը եղաւ՝ ու ինչուկ հիմա
 ալ անանկ է. ուստի ինչպէս որ իր
 հոգին մեզի համար կատարեալ սի-
 րով բորբոքած է, նմանապէս սիրտն
 ալ իր բնական շարժմունքներովը
 նոյն սիրոյն հետ համաձայն կեր-
 թայ: Ասոր համար անանկ սիրտ է,
 որ մեր տրտմութիւները, մեր ձախոր-
 դութիւնները, ու մեր ամեն կերպ մնաս-
 ները կը զգայ կիմանայ, անանկ սիրտ
 է՝ որ ցաւակից կը ըլլայ. անանկ սիրտ
 է, որ մեր վրայ բոլորովին փուխ է,
 ու ամեն կերպով մեր աղէկութիւնը
 կուզէ: Տսի քսի ան մերոյ սիրտը,
 մեր փուխ սիրտ՝ սիրական՝ ու փու-
 թաջան հօրը սիրտն է. մեր հաւա-
 տարիմ եղբօրը ու բարեկամին սիրտն

է, ու երկնի և երկրի թագաւորին սիրտը ըլլալով, անանկ մէկ մեծագործ՝ ամենակարող՝ ու առատաձեռն թագաւորի սիրտ է, որ ոչ եղած է, ոչ ալ պիտի ըլլայ: Աւստի որչափ որ աս աշխարհիս մէջը հայր մը, եղբայր մը, ու բարեկամ մը, բոլոր սրտանց իր զաւակը՝ իր եղբայրը՝ իր բարեկամը՝ սիրելու ըլլայ, յնին սիրտը ամենէն աւելի մեր ազէկութիւնը համար կաշխատի, ու մեր վրայ ունեցած սէրը բնաւ չիձգեր: Անանկ սիրտ է, որ մեզի ամեն ազէկութիւնը կուզէ ընել, ու առանց արգելքի մը՝ առանց չափ մը դնելու ալ՝ կրնայ ընել: Տնի քնի ան մերոյ սիրտը, հոգին սրէն շինւած ու գործարանքներով զարդարած է. իսկ հոգին սր ալ՝ հօր և որդւոյ սէրն է: Հոգին սր աս սիրտը անանկ կերպաւորեց ու յարմարեց, որ սիրոյ ամեն կերպ զգայուն ու գործունեայ տպաւորութիւները ընդու-

նի: Անանկ սիրտ է, որ իր բոցը բոր-
 բորը ալ չի կարենալով պահել, թող
 տրւաւ, որ տիգով (Տղախոյ) մը
 խոցւի ու բացւի, ունի թէ զինքը հա-
 լեցընօղ կրակին հովահրելու տեղ մը
 գտնայ, իր բոցերը բոլոր աշխրբին
 վրայ տարածէ, ու փորձութէ նե-
 ղուէ ու ապաշխարուէ մէջը գտնը-
 ւօղ հոգիներուն՝ ապաստանելու զու-
 արձանալու տեղ մը ու խաղաղութեան
 նաւահանգիստ մը բանայ. Արդ տ-
 նոր համար ծակիկեցաւ, որ հարաւու-
 ճախանիս մէջ յայտնի ըլլայ. սիրտ
 ալ տնոր համար խոցւեցաւ, որ աշ-
 խրբին վրայով հոնիւն տպաւորելով,
 սրտիւ մէջ ունի չէ կարող ըլլանք
 բնակելու. (Անդին. ճառ. չարչար.
 ան. գլ. 3 :) Անանկ անձային սրտին
 մէջը այսչափ խելքէ մտքէ վեր ան-
 ձանձրանալի ու ամենակարօղ սիրոյ
 պատճառներ ու աղբիւրներ գտնը-
 ւելով, ինչ բան կրնայ ըլլալ, որ
 քրիստոնեայ մը աս սրտէն չիյուսայ:

Մենք յոյսերնիս յնին արդիւնքնե-
 րուն վրայ դրած ենք : Մայց ինչ ար-
 դիւնք կայ, որ յն իր սրտովը չար-
 չարանք քաշելով, համբերութիւն
 ընելով, ինքը զինքը աստուծոյ կամ-
 քին յանձնելով, կերպ կերպ խո-
 նարհութիւն ընելով, ու իր սրտին սի-
 րովը մեզի համար շահած չըլլայ :
 Մենք յոյսերնիս յնին չարչարանք-
 ներուն վրայ դրած ենք : Մայց ինչ
 բան կայ, որ ան անձային սիրտը մե-
 զի համար քաշած չըլլայ, անանկ որ
 յնին իր սրտովը քաշած նեղութիւ-
 ներուն ու հոգեվարքութենը նայե-
 լով, կրնանք ըսել, թէ մարմինովը
 քաշած տանջանքները գրեթէ պզտիկ
 բան մը էին : Մենք յոյսերնիս յնին
 արունին վրայ դրած ենք : Մայց այն
 անգին արունին կենդանի ու մշտնջե-
 նաւոր աղբիւրը իր սիրտն է, ան սրը-
 տէն իր արունը մարմինին մէջը տա-
 րածւեցաւ, ու տրտմութենը սլա-
 ճառովը անդամներէն բղխաց, ու գե-

տի պէս երակններէն վաղեց : Մենք
 յոյսերնիս յսին վերքերուն վր դրած
 ենք : Բայց իր հայր անէն մեղի թո-
 ղութի ու շնորհք առնելու համար ,
 իր կողին ու սրտին վերքէն աւելի որ
 վերքը փրկաւէտ ու զօրաւոր է . ա-
 նանկ որ կրնանք ըսել , թէ մեղի հմր
 միշտ կրխօսի , կաղաչէ , ու կըհառա-
 չէ : Ահ երանի ան միգուն , որ աս սիր-
 տը գտած ըլլալով՝ կըսիրէ , ու հա-
 լատարմութիով ալ ջերմեռանդու-
 թիւ շարունակ կըկատարէ : Անանկ
 մարդը՝ անանկ մեծագործ ու առա-
 տաձեռն թագաւորի մը սիրտը գտած
 կըլլայ , որ աշխրբիս երեսը ոչ եղած
 է , ոչ ալ պիտի ըլլայ , խիստ գթած
 ու բարերար ու հալատարիմ հօր՝
 եղբօր՝ ու բարեկամի՝ սիրտը գտած
 կըլլայ : Ան սիրտը մեր սիրտն է , վս-
 զի յսի քսի սիրտն է , որ եկեղեցիին
 գլուխը ըլլալով՝ մենք ալ ան եկե-
 ղեցիին անդամներն ենք : Կսկ թէ որ
 աստուծոյ սիրոյն մէջը մեր սիրտը շատ

ցուրտ է, ահա յնի քնի սիրտը ու
 նինք, որ ան ալ մերն է. անով զանձ
 սիրենք, ու արժանապէս աղօթք ը-
 նենք, որ ձայներնիս լըսուի. * Ագիոս
 Ժասայ չո զնրոյ իւր՝ իսլ աս չեզ
 յաղօթս ॥. (Թ. թագ. է. 27.) Կ. Ժու-
 տայ իր սիրոյն գրաս, որ անով չե-
 զն աղօթս լնէ: Աս ալ Բարեբար յնին
 սիրոյն գրաս, որ Լուգուոր է, Երէայր
 է, ու Բարեհամ է. անոր սիրոյն իմս
 է, զն զն իմ գլուխս՝ չն է: (Նոյն
 Հեղին. անգ:)

Աս յոյսը ունենալու երկրորդ
 պատճառը, բուն աս ջերմեռանդու-
 թեան որպիսութիւն է. որովհետեւ աս
 ջերմեռանդութիւն իր բնութիւնովը
 խիստ յարմար է յնր շարժելու, որ
 ամեն կերպ շնորհքը մեզի տայ: Ան
 զի աս ջերմեռանդութեւ վախճանը
 ինչ է: Առաջին վախճանը աս է,
 որ ամենասք հաղորդութեւ խորհուր-
 զը հաստատելովը մեզի ըրած խիստ
 մեծ բարերարութեւը համար՝ յնին

սրտին երախտագիտութի ընելնուս
 վկայութի մը ու նշան մը ըլլայ : Արդ՝
 թէ որ կուզենք, որ բարեկամ մը
 մեզի նորէն բարերարութիւններ ընելու
 շարժի, մեծ ճարը ան է, որ առջև
 ըրած բարերարութիւններուն համար
 երախտագիտութի ցըցընենք : Աս
 երախտագիտութիը ան վարձքն է,
 որ բարեկամը իր ըրած բարերարու-
 թիւններուն հմը կըսպասէ . ասով կը-
 հասկընայ, որ իր բարերարութիւնե-
 րը հաճութիով ընդունելի եղերեն .
 ու ասով իր բարեկամին ալ աղէկ
 տրամադրութիը ու աղէկ սիրտը ի-
 րեն յայտնի կըլլայ . ու կըհասկընայ,
 որ նորէ նոր շնորհքներու ալ ար-
 ժանի ու արդիւնաւոր է : Վայց աս
 ճշմարտութիը աւելի յայտնի կըլլայ,
 թէ որ ան ու յնին սը սրտին նայե-
 լու ըլլանք . վն զի նախ և առաջ ին-
 քը մեզ սիրեց . բոլոր ինչ որ ունէր՝
 մեզի տրւաւ, ինչուկ ինքը զինքը մե-
 զի պարգևեց . ու իր ստեղծուածնէ .

րէն ալ ուրիշ վարձք մը կամ հատուցում մը չիկրնար յուսալ, բայց մինակ սէր ու երախտագիտութիւն: Աւստի թէ որ մենք ալ իր անձային սրտին երախտագէտ ըլլալնիս ցըցընելու ըլլանք, ինքն ալ փորձով կըտեսնայ, որ իր շնորհքները սրտանց կըճանչանք ու կընդունինք, իր բարերարութիւնները մեր քովը խիստ աղէկ տեղաւորուած են, ու թէ որ նորէն բարերարութիւն ընել ուղենալու ըլլայ՝ միշտ աւելի վերաճանաչում մը կընայ յուսալ: Աւ ասանկով մեր սէրը ու մեր երախտագիտութիւնը աւելի բորբոքելու ալ կըջանայ, ունի մեր կողմանէ ալ արժանապէս ընդունելնիս տեսնալով՝ ուրախանայ:

Աս ջերմեռանդութեան երկրորդ վախճանն ալ ան է, որ յսին սրտին տրամութիւններուն ու հոգեվարքութեան տանջանքներուն մէջը՝ իրեն միտիթարանք ըլլայ: Արդ՝ մտածէ, որ տրտում հայր մը՝ իր ցաւերուն

մէջը ամենուն երեսէն ինկած ըլլա-
 լով, եբոր կըտեսնայ՝ որ իր մէկ սի-
 րական զաւակը իրեն ցաւակից կըլ-
 լայ, իր տրտմութիւններուն մէջը շա-
 րունակ քովը կըկենայ, զինքը միսի-
 թարելու համար ճամբաներ ու խօս-
 քեր կըհանձարէ, ու իրեն օգնութի
 մը ուժ մը տալու համար ամեն կեր-
 պով կաշխատի. ան ատենը ինքն ալ
 անոր անպակաս ըրած օգնութեւր վը
 սրտանց ուրախանալով՝ անոր տրտմա-
 կից ըլլալուն ու սէր ցըցընելուն վը
 կըզուարձանայ, ու ժառանգութի
 տալու կողմանէ ալ ուրիշ զաւակ-
 ներէն աւելի ան առաջ կըքաշէ, ինչ-
 պէս որ ան ալ՝ սէր ու երախտագի-
 տութի ցըցընելու կողմանէ՝ ամենէն
 աւելի առաջ նետուած է: Արդ՝ թէ
 որ յսին սիրտն ալ, որ իր ապե-
 րախտ զաւկըններուն ձեռքէն վիրա-
 ւորուած, մինակ մնացած, ու նեղու-
 թիւններու տանջանքներու ծովին մէջը
 երեսէ ձգուած է, զաւակ մը գտնա-

լու ըլլայ, որ իրեն ընկերութի ընէ՝
ցաւակից ըլլայ՝ ու մխիթարէ, ան-
կարելի է՝ որ իր անգին գանձերը ու
գաղտնի զուարճութիւնները ուրիշնե-
րէն աւելի անոր չհտայ ու չհհարս-
տացրնէ:

Աս ջերմեռանդութեան գլխաւոր
վախճաններուն մէկն ալ ան է, որ
յսի քսի ան մերոյ գերմարդկային
առաքինութիւններուն նմանինք: Արդ՝
ինչպէս կարելի է, որ յս քս ան
մեր յատուկ կերպով մը անոնց սէր
չհտայ, որ իր անձային սրտին հե-
ղութիւր՝ խոնարհութիւր՝ ան կամքին
ձեռքը յանձնարարութիւր՝ ու սէրը՝
իրենց սրտին մէջը պատկերի մը պէս
օրինակելու կը ջանան: Ան ատենը
անանկ սրտին մէջը պարտէղ մը գտնա-
լով, հոն բուսած ծաղկըներուն ա-
նուշ հոտովը կը զուարճանայ, ու իր
կողէն բղխած հրաշալի ջուրէն ինքը
անոնց ջուր կուտայ, կը բուսցրնէ,
վնասակար բաներէն կը պահէ, ու

միշտ կանանչութեան ու անուշ հո-
տի մէջ կը պահէ :

Ա երջապէս՝ յնին սրտին ջերմե-
ռանդ եղօղը պարտական է, որ յնին
ամեն օր՝ մանաւանդ ամենաօր հա-
ղորդութե մէջը քաշած զրկողութի-
ներուն ու անարգանքներուն համար
հատուցում ընէ : Արդ՝ ջերմեռանդ
մը աս ջանքը ընելով, ան անձային
սիրտը կը շահի, ու իրեն կը քաշէ :
Ի՞նչ որ մենք անիրաւութի մը, կամ
ունեցածներնուս կամ անուններնուս
մնաս մը քաշած ըլլանք, ու անանկ
բարեկամ մը գտնանք, որ բոլոր ան
մնասները մեզի հատուցանելու ու
բոլոր կորսընցուցածնիս մեզի ետ
դարձընելու խօսք տայ ու վրան առ-
նէ, անանկ մարդը մեր ճշմարիտ ու
մէկ հատիկ բարեկամը կը ըլլայ : Ասանկ
ճշմարիտ բարեկամութե հրաշալի
գործքը ամենուն պատմելու բնասին
չենք ձանձրանար, ու թէ որ ան ալ
պսանկ դիպուածի մը մէջ գտնուե-

լու ըլլայ, մենք մեզ պարտական կը-
 ճանչնանք, որ իր անունին՝ իր ունեցա-
 ծին՝ իր անձին ամեն կերպով տիրութի
 ընելով՝ ըրած բարեկամութենք բարե-
 կամութի ընենք: Իսկ թէ որ աս կեր-
 պովս վարուելու որ չըլլանք, ասանկ
 դարչելի ապերախտութեն համար մեր
 սիրտը մեզ չարաչար կը յանդիմանէ:
 ու ուրիշ ամեն բանը մէկ դի թող
 տանք, գոնէ ցած մարդ չըլլալու հա-
 մար ամըչնալնուս, ամեն կերպով
 կը ջանանք, որ կերպով մը վայելա-
 ծը ընենք: Մհ, ինչպէս կարելի
 է, որ յսին սիրտը՝ մարդու մը սրտի
 չափ ալ երախտիք չի ճանչնայ: Թէ
 ջերմեռանդապէս սրբութի առնելով,
 ու շատ անգամ այցելութի ընելով,
 ամեն որ նք պատարագը տեսնալով,
 ու իր եկեղեցիներուն զարդարանքի
 կողմանէ արտաքին պատիւն ալ պա-
 հելու՝ ու հաւատացեալներուն սրտին
 մէջը իր ջերմեռանդութիւր եւելցը-
 նելու ջանալով, աշխատելու ըլլանք,

որ բիւր հազար կերպով՝ մանաւանդ
 աստուծոնց քաջածնախատինքնե-
 րուն հմբ հատուցում ընենք, իրաւքը-
 նէ ամեն կերպով մեզի առատաձեռ-
 նութի կրնէ, ու մեր նեղութիւններուն
 ու ճակտորդութիւններուն մէջը մեղ երէ-
 սէ չիճգելով՝ գոնէ իր անուշ սրտին
 զուարճութիւններովը մեզ կըլեցընէ,
 որ բոլոր աս աշխարհիս անցաւոր ու
 խաբերայ բարիքներէն վեր են :

Ապա ուրեմն դուն քեզի սիրտ
 տալով, կտրիճութիւնով աս ջերմե-
 ռանդութե կրթութե ձեռք զարկ,
 աս ինը օրւան մէջը ըսկսէ համբ առ-
 նել, որ ան սիրտը ինչպէս անուշ
 է՝ ու ինչպէս սիրով լեցւած է. ու
 յոյս ունեցիր, յոյս ունեցիր. վն զի
 թէ որ տըւած խօսքերուն քիչիտիկ
 մը յոյս չունենալ ցըցընելու ըլլաս,
 իրեն մեծ զրկողութի ըրած կըլլաս :
 Ու ահա աս սբ յոյսն է, որ վեր-
 ջին պատճառի տեղ առջևդ կըդնեմ
 կոր, որ աս ջերմեռանդութե պտուղ-

ները վայելես : 'Նոյն ինքն յն քն
 արն մեր խօսք տրւած է, որ իր ամե-
 նասք սրտին ջերմեռանդներուն ամեն
 կերպ ամենառատ շնորհքները կու-
 տայ : Ուստի ասկից աւելի ինչ բան
 կուզես : Բայց որ շնորհքները խօսք
 տրւած է : Ողորմութե աղբիւրը վա-
 զող մեղաւորներուն՝ դարձի շնորհք-
 ները խօսք տրւած է : Յարգելի ա-
 լաքօք մարգարիտին յն ասանկ ըսաւ :
 Եւստի ինչպէ՛ որ հարստաց յայտնուի .
 ուր զէ անոնք ալ անանի անգին գան-
 յերով հարստանան, որ սրբարար
 շնորհքներով լեցուն են . ու ան սրբ-
 արար շնորհքներն ալ անանի զօրու-
 ար են, որ հարստ դատարարութե-
 լեն եւ իրաւել . (վարքին մէջը . գիրք .
 4 . հմբ . 51 :) Արկնաւոր սիրոյ ,
 փրկութե, ու սրբանալու շնորհք-
 ները խօսք տրւած է, ինչպէս որ ին-
 քը յն՝ նոյն իր աղախինին հասկը-
 ցուց՝ ասանկ ըսելով . Եւստի մէջը
 անգին գանձերը իրենան . այսինքն՝ սի-

րոյ, շնորհաց, ողորմաւելի, սրբանա-
 ըւ, ու ժրիւնելի գանձերը. (գիրք.
 7. Հմբ. 93:) Ուրիշներն ալ դար-
 ձի բերելու ու սբ ընելու շնորհքնե-
 րը խօսք տրւած է. ինչպէս որ նոյն
 վերոգրեալ յարգելին կրպատմէ,
 թէ ի՞նչ էրի՞նասոր ժրիւն ինձի հասիւ-
 ցոաց, որ ո՞վ որ հոգաց ժրիւնելի
 համար իտշխարի, անանի՛ մարտը՝ ինչպի-
 րապէս սրբերը շարժելու տրհնարը
 կրպատմաց, ու իր տշխարատնի՛նս պարմա-
 նալի պարտելի՛նս ալ կրպաղէ, ինչ որ
 ինչն ալ սրբանց յնին սրբին ջերմե-
 տանպ կրլայ. (գիրք. 6. Հմբ. 90:)
 Եւ ալ աշխարհային շնորհքները խօսք
 տրւած է. Եւ անտշխարհայանելոնն.
 Իրեանց զի՛ճտիլն ինչ օգնուելի որ հար-
 կաւոր է, անին ալ աս ճամբոյն կրգր-
 նան. Իրեանց ասնը Տեղէ՛ խաղաղուելի.
 տշխարատնի՛նս Տեղէ՛ հանգստուելի.
 ու Բանա՛ զորձիւնն Տեղէ՛ Երի-
 նասոր օրհնուելի. (Հոն տեղը:) Կեն-
 դանու թէ ու մանաւանդ մեռնելու

752856

ատենին համար ալ շնորհքներ խօսք
տըւած է . Ալեանբերնոնն Տըջը, ու
հանաւանդ Տեանելըն արեւնին՝ ան
ուարուսիանն սրբինն Տըջը արարանել-
ըն արեւը իբր արեւնն . ահ ի՞նչ անս-
հաս է ան հասը, որ հարցո՞ իր արարու-
արինն ասեանսէ՛ սրբինն հասարարանն
Ղերմեանդոն-էն ընելին էրբը իբր ար-
նի . (հոն տեղը :) Բայց ես ի՞նչ մե-
կիկ մեկիկ շնորհքներ կը համրեմ
կոր : Աս ջերմեանդութն մեջը ա-
մեն մեկ շնորհքը կայ : Ասանկ ըսաւ
յս վերոգրեալ յարգելին . Աս բե-
ղի խօսք ինարան, որ ո՞վ որ ի՛ն ասե-
նաւսէ սրբինն Ղերմեանդ իբր ըսայ, անոր
ձրայ ասեան շնորհքը իբր արեւնն . Բայց
էնելո՞ք անոնց ձրայ, որ աս անարինն
սրբինն Ղերմեանդոն-էն ըն էնելընն
իբր արեւնն :

Արեմն յիշելով, որ աս սիրտը
մեր նք ըլլալուն ու մեր փրկութեը
խիստ կը բաղձայ ու գործունէաբար
ետեւն կիյնայ կոր, համարձակ աս

աստուածային սրտին մօտենանք,
 ու խաղաղութի՛ միսիթարանք՝ ու
 խնտութի՛ կը գտնանք : Ուստի քո-
 սերփոք յէշէլով՝ շեղէ՛ Տօփէնանք, ու
 շեղե՛նք ուրախանանք ու խնդանք .
 (Շեղին . ճառ չարչար . ան . գԼ . 3 :

Եւ ինչ որ ւան մէջը ամեն մէկ
 օրը համառօտ մտածականը ու ա-
 ղօթքները ընելէդ զատ, նայէ՛ որ ա-
 մեն օր դուած յարգութի՛ններուն մէ-
 կը գործքով կատարես : Իսկ թէ որ
 քու միճակիդ կամ պարագաներուդ
 անոնք չեն յարմարիր, քու ջերմե-
 ռանդութի՛դ քեզի ինչ որ կը սով-
 րեցընէ՛ ան ըրէ : Բայց աս բանս
 աչքիդ առջին ըլլայ, որ աս ջերմե-
 ռանդութե՛ ու ամեն ուրիշ ջերմե-
 ռանդութե՛ն ճշմարիտ պտուղը՝ անոր
 կապած է, որ հաստատ կենաս, ու
 աս կրթութե՛ մէջը ինչ որ ան քու
 սրտիդ երկնաւոր ազդեցութի՛ններ ը-
 նէ՛ անոնց հնազանդ ըլլաս :

Մ. ԱՄՋԻՆ ՕՐ :

Յնին սիրտը, անսահման սիրով սեր-
ւելլու սիրտ է :

Յնին սիրտը՝ իր գերազանցութենը
հմբ սիրւելու է : Անգի անանկ սիրտ է,
որ կենդանի է, անչարչարելի է, ան-
մահ է, յնի քնի փառաւորեալ մար-
մինին հետ միաւորւած է, ու իր ա-
մենասբ հոգիովը հոգւորւած ըլլա-
լով՝ յնին հոգիին ամեն կերպ ան-
սիրութեն ու եղբայրսիրութեն մայրուր
ու բորբոքեալ սէրը կրղզայ ու կրն-
դունի : Մ,ս սիրտը անանկ սիրտ է,
որ բանին ան հետ անձնաւորապէս
միաւորւած է, ու իր ազնիւ շարժ-

մունքները ու զգացմունքները՝ ՚ի
բանէն այ անձացեալ են: Աս ան-
պատմելի միաւորութեւ պատճառովը՝
անսահման բարձրութեւ ու պատուոյ
տը եղած սիրտ է: Այ սիրտ ըլլալովը,
իր գերազանցութեանը համար
խելք չի հասնելու սիրտ է: Անանկ
սիրտ է, որ բանին այ անձին միջ-
նորդութիւնովը անութեւ հետ միաւոր-
ւած ըլլալով, բանն ան ամեն կերպ
պարգեներուն ու շնորհքներուն
լիութիւնը իրեն կուտայ կը հաղորդէ. ու
տեսնալով՝ որ իր հրամաններուն հը-
նազանդ է, լրան կը խնդայ կը հաճի: Աս
անձային սրտին գործողութիւններուն
զօրութիւնը՝ սրբութիւնը՝ ու կատարե-
լութիւնը ով կրնայ իմանալ խելք
հասցընել:

Տեսն սիրտը՝ իր հասկըցուցած
բաներուն համար ալ սիրելի է: Աս
զի աս սիրտը՝ յսի քսի տն մերոյ սէրը
կը հասկըցընէ, որ ան ու մարդ է:
Այն անստեղծ՝ յաւիտենական՝ ան-

սահման՝ ու անհասանելի սէրը կը-
 հասկըցընէ, որ անով բանն ամ ՚ի
 յաւիտենից մեզ սիրեց. ան սիրոյն
 համար մեր մարմինը առնելու խո-
 նարհեցաւ. ան սիրովը մարդ ըլլալէն
 ետքը՝ մեզի պէս ապերախտ մեղա-
 ւորները ու ապստամբները շարու-
 նակ սիրեց, ու ինչուկ հիմա ալ եր-
 կինքէն կըսիրէ կոր: Հին սիրտը՝
 իր հոգիին մարդուս վրայ ունեցած
 բորբոքեալ սիրոյն պատկերն է. ան
 սիրոյն պատճառովը՝ կսկծագին մա-
 հով մեռնիլ ուզեց, որ արքայութիւն
 մեզի բանայ. ու ինքը զինքն ալ աշ-
 խըբքիս վրայ ձգել ուզեց՝ որ մեզի
 կերակուր ըլլայ. ան սիրոյն պատ-
 ճառովը՝ ամեն կերպ կարօտութի-
 ներնուս համար իր այ հօրը քովը
 շարունակ բարեխօսութի կընէ:

Աւստի ինչպէս կարելի է, որ ա-
 սանկ սիրուելու սիրտը չիսիրենք: (Ը-է
 որ ստեղծուած մը՝ աղէկ սիրտ մը,
 առաքինի սիրտ մը, անուշ՝ փուխ՝

ու ողորմած սիրտ մը ունենայ, կը-
 սիրենք: Հապա յ՛նչ պիտի չիսի-
 րենք, որ անձային սիրտ մը ունի, ա-
 մեն կերպ պարգևներով զարգարւած
 սիրտ մը ունի, ու բոլոր սրբերը ու
 բոլոր սերովբէները միատեղ առնե-
 լով՝ մեզ ամենէն աւելի սիրող սիրտ
 մը ունի: Ա՛հ, չիճանչնալնուս հա-
 մար՝ չենք սիրեր կոր, ետեւէն չիյ-
 նալնուս համար՝ չենք ճանչնար կոր,
 իսկ ետեւէն չենք իյնար կոր, վ՛ս զի
 կը վախնանք, որ խիստ աղէկ ու սր
 տեսնալով, գուցէ մէյմալ աս աշ-
 խըքիս մէկ բանը մեզի սիրելու թող
 չիտար, ու իր տեղը կամ իր կամքին
 դէմ սիրած ստեղծական բաներնիս
 մեզի մոռցընել կուտայ: Ա՛յ սէր, ո՛վ
 անձային սիրտ, աս ի՛նչ կուրութի,
 ի՛նչ ապերախտութի, ու ի՛նչ ար-
 հմբհութի է, որ մենք քեզի դէմ կը-
 նենք կոր, իսկ դուն՝ ստեղծուածնե-
 րուն ամենեւին կարօտութի չունենա-
 լով՝ անոնք սիրելէն չես կշտանար կոր:

Աղօթք:

Այլ անձային սիրտ յնի, ո՞վ սիրելի
 առանձնութի, ահա ես կըքաշւիմ
 քեզի կուգամ, որ աս աշխրբին
 վրդովմունքներէն ու կիրքերէն փախ-
 չիմ ու քովդ պահւրտիմ: Աս ինչ
 անուշ լուութի, կենաց նաւահան-
 գիստ, խաղաղութե՛ն ապաստանի, ու
 զուարճութե՛ց ու լուսոյ աղբիւր է,
 որ սրտիդ մէջը կըգանամ կոր: Ահ,
 ինչո՞ւ համար քեզ ասանկ ուշ ճանչ-
 ցայ. ինչո՞ւ համար աւելի շուտով
 քեզ չիսիրեցի: Ահ, քեզ չէի
 վիրաւորեր, ո՞վ քաղցր սիրտ, թէ
 որ գիտցած ըլլայի, որ ասանկ սիր-
 ւելու սիրտ ես, ու իմ հօրս՝ իմ ա-
 տուծուս՝ իմ հոգիիս տիրոջը սիրան
 ես: Իմ խաղաղութիս կորսընցուցած
 չէի ըլլար, ես իս կորսընցուցած չէի
 լլար, ու անտառներուն մէջը օձե-
 րուն ու գաղաններուն հետ կեանքս
 անցուցած չէի ըլլար, մանաւանդ որ

ասոր ներհակը՝ անմեղ աղաւնիի մը
 պէս՝ աս ուրախալի ու անվախ բունիս
 մէջը հանգիստս գտնալու կաշխատէի :
 Բայց ինչ և իցէ, վերջապէս քեզ
 գտայ, ո՛վ սիրական սիրտ, ո՛վ սիրտ,
 որ քեզ սրտանց փնտռող մեղաւոր-
 ներուն ալ միշտ բաց ես : Ասկից
 ետքը թո՛ղ մի տար, որ մէյմալ աս
 հաւատարիմ սրտիդ բնակարանէն
 դուրս ելլամ : Եւ թշնամիներս միշտ
 կըսպասեն, որ ես աս փրկութե՛ւ ու
 կենաց ապաստանին թող թամ . ուս-
 տի թէ որ ես ալ ասկից դուրս ել-
 լալու ըլլամ, կեանքս կորսընցընելու
 ու իս մեռցընելու պիտի աշխատին :
 Ա՛հ, աւելի կուզեմ, որ աս բոցե-
 ղէն ծովուս մէջը երիմ ու ետքը
 մեռնիմ, քան թէ մէյմալ քու սերդ
 մէկ դի ձգեմ, ո՛վ յնիս անսահման
 սիրով սիրւելու սիրտը :

Ա՛յց հայր մեր, ողջոյն, ու դատու հօր :

Ո՛վ սիրտ յսի , որ իմ սիրովս
բորբոքւած ես ,
Արևնդրեմ , որ իմ սիրտս ալ քու
սիրովդ բորբոքես :

Լ. ԿՆԷ :

Լ. մենակարող անձ . կաղաչենք աս
չնորհքը մեզի ըրէ , որ ինչպէս որ
քու սիրելի որդիիդ ամենամբ սրտին
վրայ պարծենալով՝ իր սիրոյ մեզի
ըրած մեծամեծ բարերարութիւները
յիշելով՝ պատիւ կընենք կոր , անանկ
ալ անոնց օգուտը ու պտուղը քա-
ղելով ուրախանանք , շնորհօք ան
մերոյ յսի քսի , ամէն :

Յսին սիրտը զօրաւոր խթաննե-
րով քեզ իր սիրոյն կըհրաւիրէ կոր .
խիստ քեզ ու խօսքերով քեզ կը-
կանչէ , որ . ու խիստ շահաւոր ու
անոնչ կերպով մը քեզի կըհրամայէ
կոր ու ամէն բանէն վեր ու բոլոր

սրտովդ անձ սիրես : Արդեօք անհնա-
 զանդ ըլլալով՝ դէմ պիտի կենան :
 Չէ, չէ : Դուն ալ նք իգնատիօս
 լոյօլային հետ, որ յսին անունը շատ
 կը սիրէր, ասանկ ըսէ :

Հոս հիշեալ հետ՝ թնայ «էրպ ինձի
 պարգևէ, ու իմ հարստութիւն ինձի
 հետէ» է :

Երկրորդ օր :

Յին «երբը անանկ «երբ է , որ էր
«եր-ել էս-պէ :

Ով որ մէկը կըսիրէ , կըբաղձայ՝ որ ան
ալ զինքը սիրէ : Բայց աս բանը յն
եւելքքը մեզմէ պիտի բաղձայ , որով-
հետեւ ինքը մեզ անչափ սիրով սիրե-
լովը , ու իր սիրոյն անձային գերազան-
ցութիւնը ու մեր բնութեւնը անսահման
հեռաւորութիւն ճանչնալովը , թէ որ
զինքը սիրելու չըլլանք՝ իր պատիւը
ոտքի տակ առած կըլլանք : Չէ թէ մի-
նակ՝ մեզ երջանիկ ընելու հմբ մեզ կը-
սիրէ , հապա նաև մեր աղէկութիւնը՝
մեր փրկութիւնը՝ ու երկինքը ընկե-

բուծի ընելնիս կուզէ, ու աս բանս
անկարելի է որ կատարւի, թէ որ իր
սիրոյն փոխարէն մենք ալ սէր չը-
նենք: Եւ որ մենք երջանիկ կըլլանք,
ինքը կըհաճի. բայց աս երջանկու-
թիւնիս՝ զինքը սիրելնուս կապւած է:
Ուստի ո՞վ կրնայ հասկընալ, որ
յսին սիրաբ յորչափ կըտրտմի, երոր
կըտեսնայ՝ որ մարդը զինքը չիսի-
րեր, ու զինքը չիսիրելովը՝ իրեն հմբ
այնչափ արտօրքով փափագած ե-
րանութեւն բաղդը կըկորսընցընէ:

Եւրդ՝ ինչ բան կայ, որ յս ըրած
չըլլայ, ունզի՝ մեզ շարժէ՝ որ զինքը
սիրենք, ու մեզ երանելի ընելով՝ ի-
րեն հաճութիւն ուրախութիւն հոգայ:
Բայց տեսնալով, որ մենք իրեն դէմ
պաղութի ու անարգանք կընենք կոր,
իր կսկծագին չարչարանքներուն ա-
տենը քաշած տանջանքներէն աւել-
լի՝ սրտին մէջը տանջանք քաշեց:
Ինքը յս՝ յարգելի ալաքօք մարգա-
րիտին ասանկ հասկըցընելէն ետքը,

աս ալ ըսաւ . (Թե որ հարգելի իմ սի-
րոյս հաստատար սէր ընելո՞ւ ըլլային,
իբեմց հասար չաշածնէրս Բանի տեղ
չէի գնէր . ու Բե որ հարելն ըլլար,
տաւնն Տեժ Բանէր ընել ի՞նչ . (Ան-
կէ . վարքին մէջը . գիրք . 6 . հմբ .
53 :) Ահ հ մարդկային անգթութի .
աս անձային սիրտը՝ մինակ սիրւիլ կու-
զէ , ու մարդիկ ասանկ թմրեր՝ մարդ-
կութի ելեր են :

Սէրը՝ հնարագէտ է : Արդ՝ յն
ալ նոյն ինքն այ հօր իմաստութիւնը
ըլլալով , աս ետքի ատենները իր սի-
րովը նոր ճամբաներ հնարեց , ուղղի՞
թէ որ կարելի է՝ մեր սիրտը շահի :
Ուստի ուզեց , որ իր աներևոյթ
սէրը մեր աչքին առջին ալ երևելի
ընէ . ու իրբև թէ իր ամենաւսր սիր-
տը ներսէն դուրս կըհանէ կոր՝ որ
տեսնանք . ուղղի ասկից հասկընանք ,
թէ ներսի դին մեր վրայ ի՞նչ ան-
պատմելի սէր ունի , ու իր փափագ-
ները իմանալով՝ մենք ալ զինքը սի-

րելու կակըղնանք : Ահա՛ ան սիրտը , որ
 բոցերով կըփայլատակի , ու իր սէրը
 կընշանակէ կոր : Ահա՛ ան սիրտը , որ
 փուշերով հուսած է , ու իր տանջանք-
 ները մուրնիս կըձգէ կոր : Ահա՛
 սրտին վրայ խաչ մը , սրտին մէջը
 խոց մը , սրտէն արուն կըբղխայ կոր :
 Ի՞նչ որ աս բաներովս մուրնիս պիտի
 բերենք , որ անձային սէրը մեզի հա-
 մար մատնըւեցաւ , խաչւեցաւ , ու
 խոցւեցաւ : Ահ որ այսչափ բանե-
 րուն վրայ յի կըտեսնայ՝ որ զինքը
 չենք սիրեր կոր , վախնանք , որ ա-
 սանկ չափէն աւելի մեզ սիրող ու ա-
 նարգաբար մեզմէ արհամիհած սիրտը
 մեզի կըբարկանայ վրէժխնդիր կըլլայ :

Աղօթք :

Ով անձային սէր , մեզի պէս ողոր-
 մելի ստեղծուածներուն քովը ինչ
 կրնաս գտնալ , որ այսչափ զօրաւոր
 փափագով՝ մեզմէն սիրւելու բոր-

բորիս: Մէջ, աս բանս խելքէ դուրս
 հրաշք է, որ քու սրտիդ մեծահո-
 գիութիւնը կընէ կոր. * Մասն մը սրտի
 քո սրտիցը կ'ան կ'էծոմէն կ'այս ॥
 (Թ. Ստագ. է. 21.) Կ. Մուրսուս
 Տե՛ծա՛նձ Բանիւրը քո սրտիցը յարմար
 բնիւր: Սէն որ երկան ատենով՝ ա-
 մենակարող ու ամենարարի տիրոջը
 մեծվայելութիւնը ծառայութիւնը բրած
 ըլլայինք, ան ատենը կըվայլէր՝ որ
 վարձքերնիս առնելու համար՝ քեզ
 սիրելու արժանի ըլլայինք. բայց աս
 ասանկ չըլլալով, ինչպէս կարելի է՝
 որ մեր սէրը մեզմէ ուղելու դուն ա-
 ռաջ վաղես: Սակայն ախտոս, աս
 սէրը ինչ անարգութե մէջ ինկեր
 է: Մուրսուս ստեղծուածները՝ շատ կեր-
 պով մարդուս վնասակար կըլլան՝ ու
 իր յաւիտենական դատապարտու-
 թիւնը պատճառ կըլլան կոր. ու մարդս
 անոնք սիրելէն ետ չիկենար կոր.
 իսկ դուն ան սիրոյն մէկ կայծն ալ
 մարդէն չես կրնար կոր գտնալ, որ

գուն ալ զուարճանաս՝ մարդն ալ ե-
 րանելի ըլլայ : Ահ ինչու համար մէկ
 վայրկենի չափ բոլոր մարդոց սրտին
 տէրը չեմ կրնար կոր ըլլալ , որ քե-
 ղի ողջակէզ ընելով՝ քեզ չիսիրօղ-
 ներուն ամենուն քարսրտութեը հա-
 մար կերպով մը հատուցում ընէի :
 Տայց որովհետեւ ես մինակ իմ սիրտս
 կրնամ քեզի տալ , գոնէ իմ սիրտս
 քեզի ողջակէզ կրնեմ , որ քու ա-
 նուշ սրտիդ բոցերուն մէջը երի՝
 մոխիր կտրի : Աւստի ահա քու առջևդ
 երեսի վրայ իյնալով , իմ սրտիս ա-
 պերախտութեանը համար ճշմարիտ
 զղջում ընելով , ու ուրիշներուն
 քեզի ըրած անհաւատարմութեը
 համար ցաւելով , իմ սիրտս քեզի
 ողջակէզ կրմատուցանեմ : Ասանկ
 կոտրած՝ զղջացած՝ ու խոնարհած
 սիրտը ընդունէ կաղաչեմ . վն զի գուն
 քու մարգարէիդ բերնովը մեզի հաս-
 կըցուցիր , որ քու առջևդ ամենէն
 աւելի հաճոյական ողջակէզը՝ աս է .

* Պատարագ աս' հոգի խոնարհ . զսիրտ
 եւ Կ հոգի խոնարհ' աս' ոչ արհամար-
 հէ ॥ : (Սաղմ. Ժ. 19.) Կ՛ . ամբնա-
 ընդ խոնարհամ հոգին' աս' ոչ լուսնի լ .
 զլուսնայամ սիրտը ու խոնարհամ հոգին
 աս' շարհամարհեր : Ա՛մէն :

Ս' էց հայր Տեր , ոչ ընչն , զուստ հօր ,
 ու զերբ դրած արժեքը . երէս , 26 :

Աճքդ վերցուր , յսի քսի բաց-
 ւած կուրծքին մէջը՝ իր ամենամբ
 սրտին նայէ , որ ինքը զինքը վրանիս
 սիրով բորբոքած կըցըցընէ կոր . ու
 նայէ , թէ արդեօք քու սիրտդ ալ կըր-
 նայ զիմանալ , որ յսի քսի անձային
 անձը չի սիրես , որ մեզ այսչափ սիրեց :

Ստիկ ըրէ , յս քեզի ինչ կըսէ
 կոր : Ա՛հա ան սիրտը , որ հարգոց զայ
 այնչափ սէր պըտաւ , իսկ հարգելի՛ ան
 սիրտը արժանապէս չէն սիրելի իր : Ա՛ս
 լսելով , ապերախտու թեանդ համար
 թողու թիւն խնդրէ :

ԵՐՐՈՐԴ ՕՐ :

Յնին սիրոյն՝ Երեւոյո-ւմ տիւնը :

Ինչպէս որ յնին ամենիմաստ հոգին երբոր ստեղծւեցաւ՝ առաջին վայրկենէն միոց վն անպատմելի սէր մը ցըցընելու սկսաւ, նոյնպէս սիրտն ալ անմիջապէս զգալի եղանակով ան սիրով լեցւած հոգիին բորբոքած փափագներուն յարմար շարժելու սկսաւ : Յն փութալով՝ մարդկան փրկութիւնը կրմտմտար, սիրտն ալ անոնց վրայ սիրով կըտաքնար. ու հրաշք էր, որ ասանկ փութս սիրտը՝ անանկ մարուր կրակին ուժէն չէր հալիր : Ահ, սբ անձաճնայ կուսա-

կան արգանտին մէջը գոցւած մնացած ատենը, ան ինը ամիսը իր սրբտինն որչափ երկան երեցած պիտի ըլլայ: Ահ զիտէ ինչպէս շատ անգամ սիրտը կուրծքին մէջը կը զարնէր, ու կըբաղձար՝ որ մայրական բանտէն մէյմը ելլայ՝ ու իսրայելին կորսըւած ոչխարները փնտռէ:

Արջապէս ծնաւ՝ աշխարք եկաւ: Ան ատենը սիրտն ալ ուրախութէն չափէ աւելի լանցաւ: Աբոր իր անձամօրը երեսը առաջին անգամ տեսաւ, եբոր իր աչքները սուրբ անձամայ աչքներուն հանդրպեցաւ, եբբոր տեսաւ՝ որ նր անձամին նր հայր յովսեփին հետ իր առջևը ինկեր երկրպագութի կրնեն կոր, արդեօք իրեն ինչ ուրախութի եղաւ: Ան ախոռը ան ատենը իր սրտին նոր դրախտ մը եղաւ: Ան հովիւներուն անմեղութիը ու ջերմեռանդութիը տեսնալով, որ իր առջևը յարգութիւն ընելով՝ իրենց ընծաները կուտան

կոր, տակը եղած խոտերուն խոթե-
լը չէր իմանար կոր: Իր անձային նայ-
ուածքովը անոնց սիրտը մտաւ, ու
մաքրութե՛ն՝ անմեղութե՛ն՝ ու սիրոյ
կողմանէ տեսաւ՝ որ իր սրտին նման
են: Ա՛հ իրաւցընէ պէտք էր որ ը-
սեր. իմ սրտիս պէս շինւած սրտեր
գտայ. * Գրիէ այս ըստ սրտի իմո՛ւս ॥
(Գործ. ԺԳ. 22:)

Իայց աս ասանկ ըլլալով, յնին
սիրտը առանց տրտմութե՛ն չէ: Ալը-
վայէր՝ որ ասանկ ըսէր. ափսոս
ափսոս. գեղերուն հովիւները ինծի
երկրպագութի՛ կրնեն կոր, իսկ բեթ-
ղեհէմի քաղքըցիները ինծի համար
հոգ չեն տանիր կոր: Իմ տունս ե-
կայ, ու իս չընդունեցան: Արկինքէն
ինչայ, որ անոնք փրկութե՛ն հասցը-
նեմ. իսկ ան ապերախտները՝ իս կը-
պարտաւորեն կոր, որ ախոռի մը մէջ
քաշւիմ սրղմիմ: Ա՛նոնց անգթութե՛րը
պատճառովը հայրս ու մայրս աս տեղս
խիստ մեծ նեղութի՛ ու վիշտ պիտի

քաշեն : Նանք ան է , որ մինակ աստնք չեն , որ ինծի ապերախտ պիտի ըլլան . մինակ աստնք չեն , որ անանկ տիրող մը դէմ անգուծ պիտի ըլլան , որ իր օրհնութիւները իր սրտէն բոլոր մարդոց վր տարածել կուզէ :
 Ա՛հ , սիրող սրտի մը ի՞նչ տանջանք կըլլայ , երբ կըտեսնայ՝ որ իր բարերարութիւնները ասանկ անարդանֆով ոտքի տակ կերթան :

Ա. Գ. Ը. Գ. :

Ո՛վ ամենասիրելի յմ իմ , ան ծնած ատենդ . ես ալ աչքիդ առջևն էի . անոր համար իմ ապերախտութես ալ բոլոր բեռը սրտիդ մէջը իմացար :
 Աս ի՞նչպէս բան է , որ դուն բարերարութիւններովդ իմ սիրտս շահելու աշխատիս , իսկ ես այնչափ ապերախտ ըլլամ , որ քու բարերարութիւններովդ համար մէյմը շնորհակալ ալ չըլլամ : Նուն իմ սիրտս

շինեցիր ու զարդարեցիր, որ քու
 տունդ ըլլայ, իսկ իմ սիրտս՝ ստեղծ
 ծուածնեբուն ու աշխրբին ցանկու-
 թիներուն բնակութի տրւաւ. կիր-
 քերուն ու մեղքերուն՝ ամեն կողմա-
 նէ բացւեցաւ, իսկ քեզի միշտ գոց
 մնաց, քեզի անկիւն (Իօշէ) մի ալ
 չիթողուց՝ որ հոն հանդիս: Այց
 հիմա վերջապէս կրճանչնամ, ու
 սրտանց զղջալով՝ իմ անշնորհք ու
 քարացած մոռացկոտութիս կանար-
 գեմ: Յն, քու ամենամբ սրտէդ իմ
 սրտիս լուսոյ ճառագայթ մը շնորհէ,
 որ սիրտս լուսաւորէ, ու քու վրադ սի-
 րով բորբոքէ: Անանկ ըրէ, որ քեզ
 ճանչնամ, ու ճանչնալով՝ քեզ
 փնտռեմ, ու փնտռելով՝ քեզ
 գտնամ, ու գտնալով՝ քեզ սիրեմ,
 ու այն անկարգ ցանկութիները յա-
 ւիտեան մոռնամ, որ ինչուկ հիմա
 սրտիս մէջը գալուդ արգելք եղան:
 Ափսոս ան կորսնցուցած ատենիս,
 որ իմ փրկիչս ու անձս չիսիրեցի.

Անուշ Ժամանակին այնքին, յարուս-
 դեպ ոչ սերեցի:

Այ էջ հայր Տէր, ողջոյն, փառս հօր, ու
 լէրը Կրօնաբանութիւն. Էրեւ. 26:

Յն ասանկ կըսէ կոր: Այ՛ս եմ ան
 ճամբան, ճշմարտութիւն, ու կեան-
 քը, որ արքայութիւն կըտանի. ապա-
 հով ճամբայ, յաւիտենական ճշմար-
 տութի, ու յաւիտենական երանու-
 թեան կեանք: Ահ, յին սիրով
 լեցած սիրտը՝ ինչեր ըրաւ, ինչեր
 քաշեց, ինչեր բանեցաւ, որ մեզ
 իրեն քաշէ, իր յաւիտենակն ճշմար-
 տութիւն մեզի սովորեցընէ, շնորհաց
 կեանքը մեզի պարգևէ, ու մեզ արքայ-
 ութն երանական փառքին հասցընէ:

Յնին անայն սրտին երկրպագու-
 լի, ու ըրած անլի- բարեբարո-
 ներուն հիշ շնորհակալու-
 լի ըրի:

Չորրորդ օր .

Յօ՛ղն սիրար՝ մագդաղէնացիին հետ :

Մտածէ, թէ յօի քսի ան մերոյ սիրտը սիրով լեցւած ի նչնոս ուրախացաւ, եբօր տեսաւ, որ մարիամ մագդաղենացի մեղաւորը ապաշխարելով իր ոտքը ինկեր էր : Յօին ոտընները պահնելով կրտսքցրնէ կոր, արձունքովը կը թրջէ կոր, ու մազերովը կը շորցրնէ կոր : Օգեցաւ՝ ճակատը գետինը դրաւ, ու բերնէն խօսք մը չի հանելով, արձունք թափելովը՝ աղէկ մը խօսեցաւ, ու սրտովը ճոխարանու թիւն ընելով՝ մեղքերուն թողութիւնը խնդրեց : Աերջապէս ցա-

ւագին հառաչանքներովը իր երկնա-
 ւոր վարդապետին ողորմած սրտին
 մէջը մտաւ : Ա՛հ, ետքը ետքը մագ-
 դաղենացին յաղթելով, յսին գթած
 սիրտն ալ չիկրցաւ ուշացընել . պէտք
 եղաւ՝ որ մագդաղենացին մխիթարէ .
 վասն զի կըտեսնայ կոր, որ ասանկ
 ամեն կերպով ապաշխարութիւն ընօղ
 մեղաւորին սիրտը՝ զղջում ունի :

Վայց տօր իմ, մագդաղենացիին
 մեղքերուն համբանքը չիկայ : Անանկ
 է՝ կըսէ . սակայն իմ բարութիւն ալ՝
 անսահման մեծութիւն ունի : Վայց տօր
 իմ, ո՞վ գիտէ՝ որ իր գայթագղութիւ-
 ներ տալովը՝ սրտէդ որչափ հոգիներ
 գողցեր է : Անանկ է՝ կըսէ . սակայն
 գո՛հ եմ, որ առաջին դարձի եկօղն
 ալ՝ ինքն է : Վայց տօր իմ, դեռ
 մեղքերուն ապաշխարութիւնը ըրած
 չէ՛, դեռ մարմինին մահացուցումը
 ըրած չէ՛ : Անանկ է՝ կըսէ . սակայն
 իր սրտին կատարեալ զղջումովը՝
 ապաշխարութիւն ալ ընելու սկսած է :

Իս շատ սիրելուն համար, ես ալ
 մեղքերուն շատութենը թողութիւն
 կուտամ : Աւստի ո՛վ մագդաղենացի,
 սիրոս շահեցար, խաղաղութի՞նով
 երթաս . * Ե՛րբ 'ի Խաղաղութե՛ն ॥ .
 (Ղուկ. Է. 50 :) Ո՞վ զարմանալի
 բարութի սրտին յնի : Երդեօք որուն
 ուրախութիւնը աւելի մեծ է, մագդա-
 ղենացիին սրտինը՝ որ ինքը զինքը
 մեղքերէն արձրկած կըտեսնայ կոր,
 թէ յնին սրտինը՝ որ ասանկ մեծ
 մեղաւորի մը թողութի կուտայ կոր :

Սակայն ասանկ զօրաւոր մխիթա-
 րութեն մէջը՝ յնին սիրաւ տրամուծի
 ալ ունի : Զոն տեղը հրաւիրածնե-
 րը տեսնալով, որ յն միշտ մեղա-
 ւորներուն հետն էր, կըզայթագղին,
 ու տանտէր փարիսեցին ալ կըտրտն-
 ջէ կոր : Ե՛հ, յնին սրտին բարութիւնը
 ասոնք չեն ճանչնար կոր . իրաւքնե-
 ան անձային սրտին ողորմած հնարք-
 ները չեն հասկընար կոր : Յն քն-
 արն մեր՝ անոր համար անոնց առջևը

աս մեծ մեղաւորը իր մեղքերէն կար-
 ձրկէ կոր, որ անոնք ալ համարձա-
 կին, ու թողութի գտնալու յոյս
 ընեն, կուզէ կոր՝ որ եղած բանը բո-
 լոր քաղքին մէջը զրուցւի, ուղղի որ-
 չափ մեղաւորներ որ կան՝ ամենն ալ
 իր բարութեւր ապաւինին, կուզէ կոր՝
 որ ինչուկ աշխրբիս ետքը աս բանիս
 յիշատակը մնայ, ուղղի ամենն ալ
 գիտնան՝ որ իր սիրտը բորբոքեր է՝
 ամենուն գարձին կրփափագի, ու ա-
 մենուն ալ շուտով թողութի տալու
 խօսք կուտայ: Սակայն ան իմ յսիս
 սիրտը, ինչպէս մոռցրւեր ես, որ ան
 ատենը որչափ քիչ մեղաւորներ
 գտնուերեն, որ քու բարութիդ բա-
 նեցրենն, ու հիմա ալ որչափ քիչ
 մարդ կայ, որ բարութիւնդ վայել
 գիտնայ:

Ե. ԴՅՈՒՄ:

Աւրեմն ո՞վ ամենագթած փրկիչ իմ,
 իրաւ է, որ մեղաւորները որչափ որ

քեզ արհամարհած ու վիրաւորած
 ըլլան, այսու ամիւ դուն քու կողիդ
 բացւած վէրքէդ կը հասկըցընես, որ
 իրենց հոգիին ու իրենց փրկութենը
 համար ծարաւի ես: Ա՛հ, քու հա-
 ուչանքներուդ ու փափագներուդ՝
 ամենէն աւելի ես կը նամ հասնիլ:
 Ա՛հա քեզի հոգի մը, որ մինակ ինքը
 ինքիրենը հազարներով մեղաւոր հո-
 գիներ կարժէ: Ա՛նանկ հոգի է, որ
 քեզի հաւատարիմ եղող սրտերուն
 շատը դժոխքին որոգայթներուն մե-
 ջը ձգած է: Յիսուս, աս հոգիս՝ իմ
 հոգիս է: Ա՛ս ասանկ ըլլալով, հո-
 գիս թողութի գտնալու յոյս ունիմ.
 վասն զի դուն մեզ հրաւիրեցիր, որ
 ապաշխարելով՝ քու սիրտդ դառ-
 նանք: Ա՛յց ի՞նչպէս համարձակիմ
 նորէն ան սիրտը մտնամ, որ այնչափ
 անգամ անհաւատարիմ ըլլալով՝ ան-
 կից փախեր եմ: Ա՛լ աղէկ է, ո՛վ սի-
 րելի վրկիչ իմ, որ մազդաղենա-
 ցիին պէս ոտքդ խնամ: Ա՛վ սիրե-

լի յն իմ , ու վարդապետ իմ , ոտեր .
 ներդ ինձի տուր , որ բերնովս պագ-
 նեմ , ու արձունքներովս թրջեմ :
 Քայց վայ ինձի , տր իմ , որ ոտերնե-
 րուդ վրան ալ մեղքերովս բացած խո-
 ցեր կրտեսնամ կոր : Գոնէ թող
 տուր , որ արձունքներովս արունը լը-
 ւանամ , ու դուն ալ քու պատրուած
 կողէդ բղխած ջրովը՝ իմ հոգիս գար-
 շելի անօրէնութիւններէն մաքրէ : Ահա
 բոլոր սրտէս քու առջևդ խօսք կու-
 տամ , որ ասկից ետքը մէյմալ քեզ
 չիրարկացընեմ : Ահա , երբ պիտի ըլ-
 լայ , որ իմ սրտիս մէջը քու բերնէդ
 աս անուշ ու մխիթարական խօսքերը
 լսեմ . * Ա՛րե՛ն՝ է խաղաղու-թիւն ॥ . Գ .
 խաղաղութիւնով երթաս :

Ա ից հայր Թր , ողջոյն , Գոստ Կօր , ու
 վերը դրամած աղօթիւ . Երեւ . 26 :

Յնին աղաչանք ըրէ , որ իր աս-
 տուածային սրտին համար ամեն կերպ

մեղքի աղտը սրտէդ վերցընէ, լը-
ւանայ, մաքրէ, սրբէ. ու նորէն քե-
զի շխտակ ու մաքուր հոգի մը տայ,
ոնցզի սրտով նք եղօղներուն երա-
նութիք վայելես. ու խոնարհուածիով
սրտանց իրեն ասանկ ըսէ :

Յն, ներսի գին հոգուս ու շնորհ
սիրտի մը սրբեղծի :

Հինգերորդ օր :

Յսին սիրտը՝ առնանք հաղորդուելէ
խորհուրդը հասարակած ասիւնը :

Յս քս տրն մեր՝ մարդոց համար
մեռնելու կերթայ կոր : Կարդախ ու
ապերախտ ստեղծուածներու համար
մեռնելէն աւելի՝ ուրիշ զարմանալի
նշան մը կրնար ըլլալ, որ մարդս
մտմտար՝ ու անով հասկընար, որ
յսին սիրտը մեր վրայ ի՞նչ սէր ու
նի : Իայց մարդոցմէ զատուիլը՝ իր
սրտին շատ կծու եկաւ. մս զի մար-
դոց հետ կենցաղավարուիլը՝ իրեն
խիստ հաճոյական է : Ասոր համար
միշտ մեզի հետ մնալ ուզելով, ա-

մենասք հաղորդութեւ հրաշալի խոր-
հուրդը հաստատեց, ուղղի հոն տե-
ղը՝ հացին տեսակին տակը մեր աչ-
քին առջևը ըլլալով, շարունակ իրեն
այցելութի ընելու կարօղ ըլլանք,
ինքն ալ մեղի հետ ընտանեբար կեն-
ցաղափարի, ու իր բարեբար սրտին ա-
մեն գանձերը մեր հոգիին վրան լե-
ցրնէ:

Եւ այց յին սիրտը՝ սիրելու կող-
մանէ խիստ առատաձեռն ըլլալով,
այսչափ սիրոյ շատութիւն ալ իրեն
քիչ երևցաւ: Աւստի աս սք խոր-
հուրդիս մէջը չէ թէ մինակ մեղի
ընտանի, հապա նաև մեղի կերակուր
ըլլալ ուղեց, անանկ որ մեր լեզուին
վրան նստի, մեր սիրտը ինչնայ, ու
հոն տեղը իր սիրտը մեր սրտին մօ-
տեցընելով՝ մեղի հասկըցնէ, որ մեզ
ինչպէս կը սիրէ, ու սիրոյ բոցերո-
վը՝ մեր թմրածութիւնը ու պաղու-
թիւնը արթնցրնէ: Եւ սրտին յար-
մար սիրտ մը գտնալու համար, որ-

չափի դիմադարձութիւններ քաշեց, որչափ խոնարհութիւններ ըրաւ, որչափ նախատւեցաւ: Ասոնց ամենն ալ առաջուց աչքին առջևը տեսաւ, ու ընաւին հոգ չընելով, վաղելով դնաց դիմաւորեց, բաղձալով, որ գոնէ մէկ հաւատարիմ սիրտ մը գտնայ, որ ան սիրտը իր անձային սիրտին անուշ վարմունքներուն ու առատաձեռնութիւնը համեմատ ըլլայ:

Աս սր խորհուրդիս մէջը՝ ինքք իր մարմինին հետ միատեղ իր սրտին վրան ալ՝ ներքին Փիղիգական ու իրական տէրութիւնը մեզի տրւած է: Յսի քսի ան մերոյ մարմինին ու սրտին վրայ ստացած տէրութիւնիս՝ բացարձակ տիրութի է, ու ամենեին չափաւորութի չիկայ: Արարող ենք՝ եկեղեցիներուն մէջը իրեն այցելութիւն ընել, որչափ որ կուղենք՝ իր հետը տեսնուիլ, ճամբաներուն մէջը ժուռ անցընել, աները տանիլ, ձեռքով դպչիլ, ու վեր Հապէս մեզի

ալ կերակուր ընել : Ա՛ս տէրութե՛հ
 հետ՝ որ իր մարմինին վրայ ունինք,
 ընդհանուր իշխանութի՛ ալ ունինք,
 որ ամեն ատեն, ամեն տեղ, ու ամեն
 կարօտութի՛ններնուս համար գործածենք :
 Ա՛մենամբ հաղորդութե՛ մէջը՝
 ինքը մեր ամեն բանն է, մեր հայրն է,
 մեր եղբայրն է, մեր ընկերը,
 վարդապետը, հովիւը, դեղը,
 բժիշկը, կերակուրը, ճամբու պաշարը,
 ու առաջնորդը : Ա՛յլ առատաձեռնութիւն
 անձային սրտին, որ ճշմարտապէս կը սիրէ :

Ա՛յլ :

Ա՛յլ ամենասիրելի յս իմ, բոլոր հրեշտակները քեզ գովեն, ու բոլոր մարդիկ քեզի շնորհակալութի՛ ընեն,
 ու անպատմելի սիրոյդ համար քեզ օրհնեն, որ անութի՛ովդ՝ հոգիովդ՝
 ու մարմինովդ ամենամբ հաղորդութեան մէջը քու պատուական սիրտդ

մեզի պարգևեցիր : Առաջին , որ սիրտս՝
 վառւած բորբոքւած բուրվառի մը ար
 ըլլար , ուրի առանկ սիրով սրտիս մէջը
 եկած հանգչած առնեղ՝ երկնաւոր ա-
 ռաքինու թիւերու անուշահոտ ծու-
 խերը քեզի ընծայէի : Ա՛հ , անանկ
 սիրտ մը կարող ըլլայի ունենալ , որ
 քու սրտիդ նման ըլլար , ուրի քու
 աղէկու թե՛դ յարմար ճամբայ բռնէի :
 Ա՛լ յաւիտենական կրակ՝ որ բնա-
 ւին չես մարիր . ո՛վ անգին սէր՝ որ
 խիստ պաղած սրտերը կըտաքցընես ,
 որչափ որ սրտիս մէջը քեզի անհա-
 ճոյ՝ կամ սիրտդ կօտրելու բան մը
 կայ , բոլորն ալ քու հոգւովդ երէ՛
 վերջացուր : Ա՛րբ ան օրը պիտի գայ ,
 որ սրտիս մէջը քեզի արժանաւոր
 բնակարան մը պատրաստելէս ետքը ,
 բոլոր հոգիս գայ՝ պրկունքներուս
 վրան ժողվուի , ու քեզի ըսէ . յի-
 սուսս՝ մի վախնար , իմ սրտիս տու-
 նը եկուր : ահա բնաւին թշնամի-
 ներուդ մէկը չիմնաց : Ա՛լ ազնիւ

սիրտ յնիս, երբ իս բողոքովին քովդ
պիտի առնես: Աճրբ պիտի կարօղ
ըլամ ըսելու. իմ սրտիս անձը ու
իմ յաւիտենական ժառանգութիւն
դունես. * Աճ սրտի ինոյ. Բաժին իմ
անձ յաւիտենիս ||. (Սաղմ. 48. 26:)

Սէպ հայր Տէր, ողջոյն, զատաւ հօր, ու
ձերբ դրամ թողլէս. Երեւ. 26:

Յնին սիրտը՝ մեզի հետ զուար-
ճանալ կուզէ, մանաւանդ ամենանբ
հաղորդութեան խորհուրդին մէջը. ու
հոն տեղը իր ամենանբ ու ամենամա-
քուր մարմինը մեզի կերակուրի տեղ
կուտայ, ու իր անձային արունը խը-
մեղի տեղ կուտայ, ուղի ասանկով
զօրանանք, սնունդ առնենք, ու իր
անձային անձը աւելի սիրելու մօտե-
նանք:

Անձի, որ առնանաւ ինչ հոգու-
դրանէնը առնելէդ առաջ՝ Երեւ

արարութեան վերջին իրարմանս, ի նշ
 աւելումն, ի նշ արարող իրարման, ու
 ասեանսսրբ հարարութեանն աստուծոյ
 իրարմանսրբ ի նշ արարութեանն ի
 նշն իրարման :



Ս եցերորդ օր :

Յնին սիրար՝ գեղեցիկանի պարպեզին
Տեղե աղօլէ՛ս ըրած տպէնը :

Ս նկարելի է պատմել , թէ յնին
սիրտը ի՞նչպէս կոտրեցաւ , եբոր
գեթսեմանի պարտէզին մէջց երեսի
վրայ ինկած՝ աղօթք ըրած ատենը՝
տեսաւ , որ իր նոյն հօր արդարու-
թիւնը՝ ըողոր մարդոց մեղքը իր
կանըկին վրայ բեռցուցերէր . * ՏԷ
Տապնէաց զնա առ Տեղս Տեր (ք լա-
տին . զանօրէնո-լիս Տեր ամենեցուն
Եր 'ի վերայ նոյն) ॥ . (Լսայ . ծ 7 . 6 .)
յթ . ամենաւ անօրէնո-լիւ անոր վրան
Բեացուց : Ճն , որ նոյն ինքը անմե-

զուծի՛ր ու սրբուծի՛ր է, գողուծի՛նե-
 րու, մարդասպանուծի՛ներու, հայ-
 հոյուծի՛ներու, սուտ երգումներու,
 ու անպարկեշտուծի՛ներու բեռանը
 տակը մնացեր է: Արչափ որ՝ ի սկզբա-
 նէ աշխարհի ինչուկ ան վայրկեանը
 մեղք գործըւած էր, որչափ որ ին-
 չուկ աշխրբիս ետքը պիտի գործը-
 ւեր. ու ամեն տեսակ մարդոց, կու-
 պաշտներուն, հրէաներուն, քրիս-
 տոնեաներուն, հերետիկոսներուն,
 կրօնաւորներուն, վերջապէս իմ ան-
 ձիս ալ բոլոր մեղքերուն բեռանը
 տակը ճղմբւեր մնացեր է. * Օտնօրէ-
 նու-լի-նս մեր ամենեցուն էր ՚ի վերայ
 նի՛ր || . ցր . ամենուս անօրէնու-լի-ր անոր
 վրան է-ոցո-ց: Այն անծիւ անհա-
 մար անօրէնուծի՛ներուն պատիժը՝
 մարդոց սիրոյն համար իր յօժար կա-
 մօքը վրան առած ըլլալովը, իր նյ
 հօրը վրէժխնդրուծի՛ր վախը՝ շփո-
 թուծի՛ր ու ցաւը՝ չորս դին առաւ:
 Ա. կերպովս յս աս ծանր բեռա-

նը տակը՝ իր հօրը ու դատաւորին
 առջևը յանցաւորի մը պէս գետինը
 ինկած ըլլալով, լսեց, որ իր հայրը՝
 մեռնելու սոսկալի վճիռը կուտայ
 կոր. * Սահու մտայն. խաչէսցի՝ ॥ :
 Օւաւակ մը, որ չտիէն աւելի իր
 հայրը կըսիրէ, ու գիտէ՝ որ իր հայրն
 ալ անսահման սիրով զինքը կըսիրէ,
 երօր կիմանայ՝ որ իր հայրը զինքը
 մեռնելու կըդատապարտէ կոր, իր
 սրտին ինչ անպատմելի տանջանք
 կըլլայ: Քիչ ատենէն քաշելու ա-
 հարկու տանջանքներուն ամենն ալ,
 բարեկամներուն մատնութիւնը, ա-
 տեաններուն դատապարտութիւնները,
 ժողովուրդին արհամարհանքը, ձա-
 ղանքներուն՝ փուշերուն՝ գամերուն՝
 ու խաչին տանջանքները, իսկոյն
 մտքին առջևը կուգան կըշարին:
 Իսոյց աս արունը որուն համար է.
 աս կեանքը որուն համար է: Սար-
 դոց համար է, որ շատը իր չարչա-
 րանքներուն գինը պիտի չիբանեցընէ,

շատն ալ իրենց համար թափելու արունը պիտի անիծէ:

Ասանկ միս մինակուկ մնալուն պատճառովը՝ ասանկ ահարկու մտածութիւններով սիրտը ճղմբւած ատենը, իրեն թեթևութի մը կըլլար, թէ որ բարեկամներ գտնար՝ որ իրեն մխիթարանք տային: Իր աւելի հաւատարիմ աշակերտներուն մէջէն երեք հատը հետը առեր էր, որ իրեն ընկերութի ընեն. ու իր սրտին հոգեվարքութե ատենը անոնց մօտեցաւ, որ քիչ մը զօրութիւն առնէ. բայց անոնք ալ կըքնանան կոր: Ահա ան ատենը եղաւ, որ սրտին մէջը ժողմբւած արունը, սաստիկ ցաւէն տարածեցաւ, ու քրտինքի պէս երակներէն դուրս ելլալով, այնչափ վազեց՝ որ չորս դին գետինը թրջեց: Ահ, յին սիրտը՝ տրտմութեը պատճառովը ճերմակ մամի մը պէս եղաւ, որ իր փորին մէջը կըհալի. * Եղև սիրտ իմ սրտէս մոմ

հաշիւաւ ՚ի Տէջ ուրուխայնի ի հայ ॥ . (Սաղմ.
իւս. 15:)

Եւրօլէր :

Ով ցաւագին սիրտ յնիս, թէ որ
աշակերտներէդ մէկը չիկայ՝ որ քեզ
մսիթարէ, ահա մեղաւոր մը քեզի
ուժ տալ կուզէ կոր: Այն ինծի.
դուն ինծի համար այսչափ տանջանք
քաշեցիր. ու ես ինչուկ հիմա քու
սրտէդ փախչելով, ամեն կերպ ճամ-
բաները բանեցուցի՝ որ դատապար-
տուիմ: Բայց չեմ ուզեր, ով
տրտմագին սիրտ, չէ, ասկից ետքը
քու տանջանքներդ մէյմալ եւելցը-
նել չեմ ուզեր: Ուստի յիսուս՝ ա-
հա քու ամենագթած սրտիդ դու-
ռը եկեր եմ, որ իմ անհաւատար-
մութիս կսկծալով լամ, ու քու սի-
րոյդ համար թողութիւն խնդրեմ:
Տէ, քու այ հօրդ զայրացեալ ար-
դարութիւն վրայէս ինջեցուր: Եւստ

ցաւեր քաշեցիր, որ իմ անօրէնու-
 թիներս իր առջին ջնջես, ու պատիժ-
 ները վճարես: Աւստի տանջանք-
 ներէդ ու տրտմութիւններէդ ինծի
 բաժին հանէ, ու տրտմութիւններուդ
 հոգեվարքութե՛դ իս մասնակից ըրէ:
 Աւելի կուզեմ, որ աս աշխրբիս մե-
 ջը սրտիս խիստ սիրելի բաները՝ ձա-
 խորդութիւնով իմ սրտէս վերնան, ու
 ամեն բանը աս տեղս իմ սրտիս դառ-
 նութի ու նեղութի ըլլայ, քան թէ
 մէյմալ քեզմէ բաժնըւիմ: Ամեն
 տանջանքը ինծի անուշ կըլլայ, թէ
 որ սիրտդ մխիթարելու կարօղ ըլ-
 լամ, ու թէ որ իմ անթիւ մեղքե-
 րովս սրտիդ մէջը բացած խոցերս
 կարօղ ըլլամ լըւանալ:

Ա ից հայր մեր, ոգևոյն, փառք հօր, ու
 վերը դրամած աղօթիք. Երեւ. 26:

Թէ որ յն քեզի նեղութի մը
 տալու ըլլայ՝ որ քաշես, ինչ նե-

դու թի՛ որ ըլայ՝ թող ըլայ, չար-
չարանքներուն ու մեռած ատենը իր
ցաւագին սրտին քաշած տանջանք-
ներուն սիրոյն համար ընդունէ:

Թի՛ որ յենն հեփ իբրան ըլլա՛ն, յենն
հեփ ու իբրան ըլլա՛ն:



ԼԻՑԹՆԵՐՈՐԴ ՕՐ :

Յին սիրտը՝ խաչելու-վեանը
տարեւր :



Եւ, կարելի ըլլար, ու մարդ մը
տեսնար, որ խաչեցեալ յնին սիր-
տը՝ խաչին վրայ ինչպէս մեղի հա-
մար սիրով բորբոքէր փրււնկեր էր :
Մեր մեղքերուն ու բոլոր աշխրբիս
մեղքերուն համար ինքը զինքը բո-
լորովին իր այ հօրը քաւութն ող-
ջակէղ կրճատուցանէր : Իր արունը,
իր չարչարանքները, իր քաշած նա-
խատինքները, իր կեանքը՝ ընծայ կր-
ճատուցանէր, չէ թէ մինակ իր
աշակերտներուն համար՝ որ իրեն

Հաւատարիմ էին, հապա նաև վրան
 փրթօղ ժողովուրդին համար, զինքը
 խաչը հանօղ դահիճներուն համար,
 ու իր հալածօղներուն համար, որ
 զինքը ասանկ ցաւագին վիճակի մը
 հասուցեր էին: Աբոր տեսաւ, որ
 մագդաղենացին իր ոտքին տակն է,
 սիրտը ցնծաց. վն զի միտքը բերաւ,
 որ իր տանջանքներովը ան արտմալի
 ապաշխարողին մեղքերը կը վճարէր
 կոր: Աջ կողմը եղած չարագործին
 խօսքերը լսելով, որ իրեն համար
 աղէկ կըսէր՝ ու ան ետքի ատեննե-
 րը զինքը ան կը դաւանէր կոր, սիր-
 տը ուրախութիւնով լեցեցաւ, որ
 անոր հոգին շահեցաւ՝ արքայութե
 հոգի ըրաւ:

Սակայն նոյն արտերը աս ալ ե-
 դաւ, որ իր սիրտը խիստ մինակու-
 թեան մէջը մնաց: Ականջ դնելու
 ըլլայ, նախատինքէն ու հայհոյանքէն
 ուրիշ բան չիլսեր, որ անանկ ժողո-
 վուրդ մը կընէ կոր. որ իրմէ չափէ

աւելի բարերարութիւնս տեսեր է :
 Աւագը չորս դին դարձնելու ըլլայ ,
 իր աշակերտներուն մէջէն յովհան-
 նէսէն ուրիշ մէկը չի գտնար կոր , որ
 իր հոգեվարքութեւն ատենը իրեն ըն-
 կերութիւն ընէ : Արտեսնայ , որ իր
 ոտքին տակը իր մայրը ցաւերուն
 պատճառովը անշարժ կեցեր մնացեր
 է . ու մօրը սիրտը մտած սուրբ՝ յսին
 սրտին նոր խոց մը կը ըլլայ : Աւագնե-
 րը երկինքը կը վերցընէ . ու կը տես-
 նայ , որ իր հայրը զայրացերէ՝ զինքը
 իր հալածողներուն ձեռքը թողու-
 ցերէ : Արնայի , որ ինքը՝ իր ձախ
 կողմը եղած գողին համար արուն
 կը թափէ կոր , իսկ գողը՝ իրեն անէծք
 կուտայ կոր . միտքը կուգայ , որ ին-
 քը իր մեռնելովը արքայութեւն դրնե-
 րը կը բանայ կոր . իսկ ան ողորմելին
 կայծակի պէս դժօխքը կինջնայ կոր :
 Աւստի յս խաչին վրայէն ասանկ կը
 պոսայ . ներութեւն մէջը եղողներ , մէյ-
 մը նայեցէք , որ իմ սիրտս ճղճոզ

ցաւին նման ցաւ կայ մի. * Տե՛նէ՛ք,
 է՛լէ՛ էյե՛ն էրէ՛է՛ք. ցաւ՝ ըստ ցաւոցս
 լե՛ալ ॥. (Լորեմ. ողբ. ւ. 12:)

Յս քս արն մեր մեռաւ. ու իրաւ-
 ցընէ իր սիրտը մեզի համար տան-
 ջանք քաշելէն աղատեցաւ, սակայն
 անարդանքները վրայէն չի վերջացան:
 Այստղած զինուորին մէկը սուր տէգ
 (հարակ) մը առաւ, ու խաչեցեալ
 մեռեալ տիրոջը կողին զարկաւ՝ ներս
 խօթեց: Ան զարնուածքին խոցը՝ իր
 սիրով լեցեած սրտին հասաւ՝ ներս
 մտաւ. անանկ որ իսկոյն ջուր ու ա-
 րուն բղխաց՝ վտակ մը եղաւ: Ա՛յ
 մեղաւորներ, ա՛հ, մե՛ք ալ աս բաց-
 ւած վէրքէն անցնինք, յնին սիրտը
 մտնանք: Ա՛հ, մեր մեղքերուն պատ-
 ճառովը ան խոցը որչափ մեծցած է:
 Ի՛նչ աս բացեած վէրքին մէջէն
 ձեռքընիդ երկնցուցէք, անանկ որ
 սրտին դպցընէք. ձեռք զարկէք, որ
 հասկընաք, որ ձեզի համար ի նչպէս
 չի մարտելու սիրով բորբոքեր է. ու

չըլայ՝ որ իր բարութիւնը վրայ թե-
րահաւատ ըլլաք ու անյոյս գտնը-
ւիք . * Ի՛նչ պատուանա չո՞, եւ մի՛ ըն-
նէր անհատաւոր, այլ՝ հասարակացիւնը ॥ .
(Յովհ . Ի . 27 .) Կր . հասարակեցող հոն
դէր, ու անհատաւոր ինչպէս, այլ՝ հա-
սարակցո՞ղ եղէր : Աս խօսքերս՝ նոյն
ինքն խաչեցեալ ու մեր սիրով լեց-
ւած տէրը՝ իբրև թէ մեզի ըսելով՝
մեզ կըհրաւիրէ կոր :

Ա. Գ. Ը. Գ. :

Ո՞վ ար իմ և աստուած իմ , դուն
իս կըհրաւիրես կոր , որ ձեռքս կո-
ղիդ երկնցընեմ : Բայց ես ի՞նչ
պէս համարձակիմ ու երկնցընեմ ,
որ ձեռքներս այնչափ անօրէնու-
թիւններուն մէջը պլշտըկած է :
Դուն կըսես կոր , որ ձեռքս սրտիդ
դպցընեմ : Բայց ես ի՞նչպէս հա-
մարձակիմ , ո՞վ սիրելի սիրտ . որով-
հետև աս ձեռքս է՝ որ սիրտդ խո-

ցեց : Ա՛Լ աղէկ կըլար , որ կարող
 ըլլայի պրկունքներս մօտեցընել , ու
 իմ մատնած տիրոջս սրտին՝ խաղա-
 ղութե՛ն համբոյր մը տալ : Բայց վնայ
 ինձի , աս պրկունքներս ալ՝ անպար-
 կելտութիւններով , բամբասանքնե-
 րով , սրբապղծութիւններով , ու գու-
 ցէ նաև պիղծ հայհոյութիւններով
 աղտոտած է : Ա՛Տ , գիտես ի՞նչ կը-
 նեմ : Իմ հոգիս աս բացւած կողէդ
 անցընելով ինչուկ սիրտդ կըհասցը-
 նեմ ներս կըխօթեմ : Ա՛վ կենդա-
 նարար ջուր , որ անձային կողէն կը-
 բղխաս , իմ անմաքրութիւններս լուսի :
 Ա՛վ անդին արուն , հոգիս իր անօ-
 բէնութիւններէն մաքրէ : Ա՛վ բօր-
 բոքեալ սիրտ , հոգիս ամեն կերպ
 անկարգ ու մեղանչական ցանկութի-
 ները երէ՛ մոխիր ըրէ : Իմ տպաս-
 տանիս , իմ բունս , իմ յոյսս , իմ
 փրկութիս , աս սիրտը ըլլայ : Ա՛սկից
 ետքը միշտ աս սրտիս մէջը ապրիլ
 կուզեմ , ասոր մէջը մեռնելով՝ յա-

և Բաբելոնի հանգչելու կրօնափառիմ :
 * Խաղաղութիւն յայս եւ 'ի սոյն ննջե-
 ցից եւ հանգչեայց ॥ . (Սաղմ . 77 . 10 .)
 Իմ . Խաղաղութիւն զ հոս արեղս բնանամ
 ու հանգչեմ :

Ս էց հայր Տէր, ողջոյն, զառաք հօր, ու
 զԵրբ Երազ աղօթիւք . Երեւ . 26 :

Յօին ամենաւսր սիրտը՝ իր չար-
 չարանքներուն ու մեռած ատենը՝
 որչափ ցաւ, որչափ չարչարանք, որ-
 չափ տանջանք քաշեց : Արձուն հա-
 մար . մեղի համար : Ինչո՞ւ համար .
 մեղ չափէ աւելի սիրով սիրելուն
 համար : Թէ որ դուն ալ զինքը կը
 սիրես, ու թէ որ իրեն լնկերու-
 թիւն ընել կուզես, իր ցաւագին
 սրտին ցաւակից եղեր, իրեն շնոր-
 հակալու թիւն ըրէ, ու մեղքերուդ
 վրան զղջում ըրէ, որ անոնց պատ-
 ճառ եղած են :

Ի՜հ, տուան ասը շէն ուսկէր, որ ի-
 բերն ախրոյն համար բանն յը բաշէս, որ
 այնչափ փանշանքնէրուան էրախոյիսը
 ճանշնաբով, տուան ասը իբերն զոխաբերն
 յը բոսծ բըլաս :



Ութերորդ օր :

Յսին սիրտը՝ յսին խաչէն վար առ-
նըւած տալէնը :



Խաչեցեալ անային սիրոյն մարմի-
նը խաչէն վար առնըւեցաւ : Ահ,
երանի ան յովսէփ արեմաթացիին
ու նիկողեմոսին, որ ամենէն առաջ
իրենք եղան, որ յսին պատրուտած
կողին մէջը բացւած վէրքէն՝ իրենց
սիրոջը սիրտը տեսան, որ դեռ կը-
նետէր կոր : Աբոր անուշ եղով ու
խունկով ան վէրքը օծեցին, ու ար-
ձուներով արունը լըւացին, արդեօք
ի՞նչպէս ցաւակից ըլլալով ու սիրով՝
երեսնին կրակ կտրեցաւ, ու արդեօք

ի՞նչ բաներ ըսին : Բայց ամենէն
աւելի սբ անձանքը, արդեօք ի՞նչ
բաներ ըսած է : Աբ անձանքին ա-
նանկ եկաւ, որ իբրև թէ իր սիրտը
տեղէն կը փրթի կը թռչի կոր, որ եր-
թայ իր անօրդիին սրտին հետ միա-
նայ : Ահ, յսին սրտէն ալ ի՞նչ-
պէս սիրոյ ու ցաւերու կայծակներ
կելլային, որ իր մօրը սիրտը խոցեն :
Ահ, արդեօք ի՞նչպէս սբ անձանք
ալ յօժար կամօք կուզէր, որ ան
անուշ սրտին մէջը իր հոգին ա-
ւանդէ :

Բայց կայնէ, որ մագդաղենացին
ու յովհաննէսն ալ իրեն մօտենան,
Մագդաղենացին հիմա աչքներովը
ան սիրելի սիրտը կը տեսնայ կոր, որ
ատենօք իրեն խաղաղութե՛ն ողջօյնը
տրւաւ : Յովհաննէսն ալ աչքները
տնկեր՝ ան սրտին կընայի կոր, որ
ետքի իրիկան կերակուրին մէջը
վրան կը թընեցաւ : Իսկ բանն անձայ-
ին՝ ան սրտէն բաժնը ած չէր .

ուստի իր սէրն ալ՝ երկուքին վրան նայելով կրգուարձանար, որ իր վերաւորւած սրտին բորբոքած սիրողներն էին: Յովհաննէսին վրան՝ կուսական անմեղութի մը կրտեսնար, որ իր շնորհքին յաղթանակն էր: Սագգաղենացիին վրան ալ՝ ցաւագին զըջում մը կրտեսնար, որ իր ողորմութեը յաղթանակն էր: Ու կերևնայ, որ երկուքին ալ ասանկ կըսէր կոր, աս սրտիս եկէք, ու ձեր հոգիին ապահովութիը ու խաղաղութիը կըգտնաք:

Եւ, յնին սիրտը՝ չէ թէ մինակ անմեղներուն վրան, հապանաւ ապաշխարողներուն վրան կրգուարձանայ: Մինակ իր ծառայութեը մէջը թուլ եղողները, ու մեղքին մէջը քարսիրտ եղողները, իրեն ատելի են: Ետնք են, որ վերջապէս իրմէն կըվճռընաէ, ու իր սրտին դրները իրենց կըգոցէ, որովհետև իրենք ալ իր սիրտը արհամարհած

ու անարդած են : Վանի՞ անգամ
 կըլայ, որ զղջումի եկած մեղաւորի
 մը իր զուարճութիւնները կըպարգևէ .
 որ ասոր ներհակ՝ յսին նուիրած
 հոգիները իրենց պաղութենը ու ծու-
 լութենը համար ան զուարճութիւնե-
 րուն անարժան եղած են : Ինքը սէր
 ըլլալով, սիրով կապրի, սիրողներուն
 մէջը կարածէի, ու ձունի պէս սա-
 ռած՝ քարի պէս ամուրցած սրտերէն
 կըքաշէի : Ահա գուցէ պատճառը
 աս է, որ յսին սրտին մէջը դուն ալ
 մխիթարանք չես գտնար կոր : Ղուն
 ոչ յովհաննէսին մաքրութիւր ունիս,
 ոչ մագդաղենացիին կատարեալ
 զղջումը ունիս, ու ոչ ալ երկուքին
 սէրը ու եռանդը ունիս :

Ա. Դ. Թ. Դ :

Այլ յիսուսիս սիրտը, իրաւ անանկ
 է. ես ինչուկ հիմա քեզ չիսիրեցի .
 հիմա ալ իմ պաղութես պատիժն

է՝ որ կը բաշեմ կոր : Մ՛հ, քու սրտէդ
 դուրս եղած ատենս, կեանքս՝ նեղու-
 թիով, փորձու թիով, անհանգստու-
 թիով, ու կորուստով կանցընեմ կոր.
 մարած կայծ մը եղերեմ, անզգայ մո-
 խիր, անկենդան սիրտ, անլոյս ու ան-
 սէր հոգի եղեր եմ : Դայց ուշ ալ
 թող ըլլայ, ինչո՞ւ համար կարող պիտի
 չըլլամ, որ քեզ սիրելու սկսիմ :
 Այլ ամենագթած սիրտ, արդեօք ին-
 ծի այնչափ բարկացած պիտի ըլլաս,
 որ իմ սիրտս ասանկ զղջումով ցա-
 ւով ու հառաչանք ընելով՝ քեզ-
 մէն ողորմութի ու թողութի ուզէ,
 ու դուն հաշտըիլ չուզենաս : Ամ
 թէ արդեօք ես քեզի աս նոր նա-
 խատինքը կընեմ, որ քու բարու-
 թեանդ վրայ յոյս չի դնեմ : Մ՛հ,
 կարելի ըլլար, ու իմ սիրտս քու
 սիրտդ մէկ ընէի. ան ատենը մեր
 սիրոյ փափագները՝ փոխադարձ ու
 յաւիտենական կըլլային : Դուն՝ ին-
 ծի, ու ես՝ քեզի. դուն՝ իմ վրկու-

Թեանս, ու ես՝ քու փառքիդ, դուն՝
 իմ պսակներուս, ու ես՝ քու բա-
 րեհաճութեդ. դուն՝ ինձի բարիք
 ընելու, ու ես՝ քեզի շնորհակալ ը-
 լալու հետ կըլլայիմք: Ղուև՝ միշտ
 իս կըմտմտայիր, ես ալ քեզ: Յս
 իմ, ի՞նչ կըսպասես, ինչո՞ւ աս
 շնորհքս ինձի չես ըներ կոր. ահա
 ես կըփափագիմ, կըյուսամ, ու
 կըխնդրեմ կոր, այն անսահման սի-
 րոյն համար կըխնդրեմ կոր, որ մեր
 հոգին պաղըշտը կեցընելու համար՝
 քու սրտիդ գանձերը քեզի բանալ
 տըլաւ: Աղէկ գիտեմ, որ դուն
 քեզ բարկացած ցըցընելու ալ ը-
 լաս. մինակ անոր համար կընես, որ
 մեզ հետդ հաշտըլու հրաւիրես.
 ու թէ որ քեզմէ թողութի խնդրո-
 ղին աղաչանքը որ մտիկ չընես, հա-
 պա մ՛դուն քովը ի՞նչ կընաս գտնալ,
 որ ան պատճառով անոր հետ հաշտը-
 լիս: Ապա ուրեմն ո՞վ սէր, ասկից
 ետքը իմ հոգիիս ու իմ սրտիս կեան-

քը դուն եղիր, ուղի ինչպէս որ
մեղքերովս մագդաղենացիին նմանե-
ցայ, նմանապէս իր եռանդագին ու-
չիձանձրացած սիրոյն ալ նմանիմ՝
որ քու վրագ ունեցաւ: Ամէն:

Ալ էջ հոյր թէր, ողջոյն, խոսք հօր,
ու վերը դրած ողբէր. էրէս. 26:

Ալ անձամբ սրտին դարձիր, որ
քեզ յնին սրտին տանի: Ալ մարիամ,
ով սիրելի մարիամ, մեր քաղցրու-
թիւր, մեր յոյսը, քեզի կը հառաչեմ,
քեզ կը կանչեմ. դուն, որ ամեն
ստեղծուածներէն աւելի քու ամե-
նաւոր որդիդ սիրեցիր, ինծի հմբ բա-
րեխօս եղիր, որ իր սբ սէրը ինծի տայ,
ուղի իր ամենաւոր կողին մէջը բնա-
կիմ, իր անձային սրտին մէջը վառ-
ւիմ բորբոքիմ, ու զինքը սիրելով
իրեն հասնիմ:

Ինչպէս որ սիէնացի նր կատա-
 րինէն՝ սովորութ ըրած էր ու կը-
 սէր, նմանապէս դուն ալ միշտ ա-
 սանկ ըսէ. Ո՛վ քողոր յն, ո՛վ քողոր
 հարկամ, կողաչէմ ինձի հասէր:

Իններորդ օր :

Յին սիրտը՝ բրնայանեայ հոգինեւումն
հարստեանը համար արտառ-լէան
Դ-ջը :

Մէ, ո՞վ կրնայ մտքովը հասկընալ,
թէ յն իր անային սրտին մէջը ի՞նչ
պէս բորբոքեր կրփափագի, որ չէ թէ
մինակ արդարները, հապա մեղաւոր-
ներն ալ փրկութէ հասնին : Բայց
ափսոս. կրտեսնայ, որ օր օրւան վր
մեղաւորները կեւելնան, մեղքին մէ-
ջը կըքարանան, ու իր սիրելի լուծը
(պոյո-նպո-բոխը) վրաներնէն նե-
տելնուն համար ալ կըպարծենան
կոր : Ինքը կըհրաւիրէ կոր, որ իր

սրտին դառնան. * Ապաշու-եցէ՛ք հո-
 շրէ-ալիք, դարձարո՛ւք սրտի-ք (քա-
 տին. դարձարո՛ւք ՚ի սիրոք) ॥. (Եսայ .
 ԽԳ. 8.) ք. հոշորածնէ-ք, ապաշու-
 րո՛ւնէ՛ք՝ ըրէ՛ք, սրտի՛ն դարձէ՛ք : Ի՛նչ
 կըլտէ կոր, որ անոնք դէմ կենալով՝
 կծու պատասխան կուտան կոր, թէ
 մէյմալ չեն ուղեր դառնալ. * Ան-
 րո-ւնէ՛ք շրջեացո՛ւք, եւ առ շեղ ոչ
 եկեացո՛ւք ॥. (Երեմ . ք . 31.) ք.
 անպէ՛ր իւրարարի՛նք, ու շեղէ շէնք
 գար : Թէ որ ինքը աշխատելու
 ըլլայ՝ որ աշխարքիս ձախորդութի՛նե-
 րովը աշխարքը աչքընե՛րնուն հանէ,
 ի՛նչ օգուտ է. որովհետեւ ասոր
 ներհակը՝ անոնք իր նախասնամու-
 թեանը դէմ բարկութի՛ն կրբողին :
 Թէ որ անոնց պաշտպանութի՛ն ընե-
 լու համար՝ անոնց մէջը ու իր հօրը
 արդարութի՛ն մէջը իր սիրտը վահանի
 մը պէս դնելու ըլլայ, ի՛նչ օգուտ
 է. որովհետեւ անոնք տեսնալով՝ որ
 պատիժնին կուշանայ կոր, իրենց

ցեալն և սնուցեալ էր զնա . . . 'ի
 հացէն նի ս-տէր և 'ի բաժակէն նի ըն-
 օղէր, և 'ի ծոց նի ննջէր, և էր նի
 իբրև ստուար ॥ (Թ. Թ. Թ. Թ. Թ.
 3.) Ի՞նչ, զինչ ծախսուաւ արժեք՝
 ու սնուցէր էր . . . անոր հացէն կո-
 տէր ու անոր բաժակէն իւրաքանչէր,
 անոր Գերիլը իւրանար, ու անոր զա-
 կէն ու էր : Արդ՝ տեսնալով, որ
 ան հոգին յաւիտենական անդունդին
 բերանը կեցեր է, ինչպէս կըլլայ,
 որ խիստ մեծ տրամուծիւն մը չու-
 նենայ :

Բայց ասոր համար արդեօք սիր-
 տը բարկացած կըլլայ : Ամեն կերպ
 իրաւունքը ունի՝ որ բարկանայ, ու
 վայ ամբարիշտներուն, թէ որ իր
 արդարութիւնը վրանին իյնալու ըլ-
 լայ : Բայց ոչ այնչափ բարկութի,
 որչափ որ տրամուծի կըցըցընէ կոր :
 * Բազում էղէն հեծո-վիք ի՞նչ, և
 սիրտ ի՞նչ էղէ արդարութի ॥ (Արեմ.
 ողբ. 22.) Ի՞նչ հաստատանք

ցեալ և անուցեալ էր զնա . . . 'ի հացէ նի՞ ուրիշ և 'ի Բաժանիէ նի՞ ընդ պէր, և 'ի ծոց նի՞ ննջէր, և էր նի՞ ի Բրե՛ս զգո՛ւսր ॥ (Թ. Թազ. ԺԹ. 3.) Կ՛, զի նա ծախո՛ւսաւ՝ պահելո՛ւ ու անուցելո՛ւ էր . . . անոր հացէն ի ուրիշ ու անոր Բաժանիէն ի ընդձէր, ու անոր Գերիւ ի ընամար, ու անոր զառնի՛ն պէս էր : Արդ՝ տեսնալով, որ ան հոգին յաւիտենական անդունդին բերանը կեցեր է, ի՞նչպէս կը լայ, որ խիստ մեծ տրամութիւն մը չունենայ :

Ի այց ասոր համար արդեօք սիրտը բարկացած կը լայ : Ամեն կերպ իրաւունքը ունի՞ որ բարկանայ, ու վայ ամբարիշտներուն, թէ որ իր արդարութիւնը վրանին իյնալու ըլլայ : Ի այց ոչ այնչափ բարկութի, որչափ որ տրամութի կը ցըցընէ կ'որ : * Իսպառ՝ Էդէն հեժո՛ւլէ՛ս Ի՛, և անոր ի՛ն լէ Էդէ՛ս արարձո՛ւլէ՛ ॥ (Արեմ. ողբ. 22.) Կ՛, Ի՛ն հոտաւանս

Եւ իսկ շատ եղաւ, ու սիրտս արարեալ
 լինով լեց-եցաւ: Եւսկից աւելի ալ
 իր հառաչանքները կեւելնայ. վն զե
 կրտեսնայ՝ որ շատ քիչ հոգիներ
 կան որ իր հետը փափագով ու ջան-
 քով աղօթք կրնեն, որ ճամբէ դուրս
 ելածները՝ իր սրտին դարձրնեն, ու
 իր անջ հօրը անոնց գէմ՝ սրած բար-
 կութիւնը բռնեն: Հն քն արն մեր՝
 յարգելի ալաքօք մարգարիտին ա-
 սանկ ըսաւ. թէ որ շեղե հասկըցընե-
 ըն ըլլամ, որ ան արդարո՞ւն լին թեղա-
 արնեբունն գէմ պայրացած է, իբրև-
 զէն՝ իս ամենամե հաղորդո՞ւն թեղը
 ընդունելն ինգառ . . . իս՝ ին ցաւե-
 րեմախան հօրս իբրև իբե . . . անգէ իր
 արդար լարնո՞ւն լին ինջըցընեա, ու իր
 ողորմո՞ւն կամար ընեա՝ որ իբենց լու-
 զո՞ւն ընէ: Աւստի թէ որ դուն ալ
 յսին ցաւագին սիրտը ճշմարտապէս
 կըսիրես, ու իրեն ցաւակից ես, գո՞-
 նէ վաղւան օրը ասանկ ըրէ. ք. մե-
 ղաւօրներուն խելարերելուն համար

նոյն ինքը յնր ամենամբ հաղորդու-
թեան մէջը իր յաւիտենական հօրը
նըւիրէ : Արանի քեզի , թէ որ յնին
սրտին գոնէ հոգի մը շահելու կա-
րօղ ըլլաս :

Ե. դ լ Ե :

Այլ համբերող ու հեզ յն , սրբ-
տիդ վրայ բացւած վէրքիդ մէջէն
ըրած հառաչանքներդ կըլսեմ կոր ,
որ մեղաւորներուն դարձին համար
ծարւելով փրոշնկելով կընես կոր :
Ե՛հ , ինչո՞ւ համար քու բաղձանք-
ներդ չեմ կրնար կոր կատարել .
ինչո՞ւ համար բոլոր աշխարհս պը-
տրտելու ու արունովս թրջելու կա-
րօղ չեմ ըլլար կոր . ուրիշ իրենց
սիրելի բունէն փախած ու կորսուած
հոգիները գտնամ , ու նորէն իրենց
բունը դարձնեմ : Ե՛հ , գոնէ աս
կսկիծը չունենայի , որ ես ալ իրենց
չար պատճառ եղած եմ , որ քեզ

մէն փախչին, ու անանկով քու
 սիրտդ տանջանքներու մէջ ձգած
 եմ: Աս ինչ բան է՝ որ ես ըրե-
 րեմ, ով ան իմ. աս ինչ համար-
 ձակութի, ինչ անգթութի է: Վու
 սրտիդ զաւակ եղած հոգիները՝ իմ
 ունայնութիներուս չուանովը՝ քու
 սրտիդ ապահով բնակարանէն դուրս
 քաշեր քրչքրթտերեմ. անոնք հոն
 տեղը եղած ատեննին, իմ անպար-
 կեշտ նայուածքներուս կայծակներու-
 վը զիրենք զարկերեմ. իմ անզգամ
 խրատներովս յորդորերեմ որ դուրս
 ելան, ուզի խարէութիով զիրենք
 ըսպաննեմ: Ավ հայր, ասկից ետքը
 հմրձակութի չունիմ, որ աչքներս
 վերցընեմ՝ սրտիդ նայիմ. վս զե
 քու սիրտդ է, որ իմ յանցանքս ե-
 րեսիս կուտայ կոր: Արչափ որ հո-
 գիս քեզի դէմ յախշտակութի ու
 անարգանք ըրած է, անոնց վրէժխնդ-
 րութիը իմ հոգիէս առ: Վայց գո-
 նէ աս միտքդ բեր, որ իմ հոգիս

ալ՝ քու սրտիդ զաւակը եղած է :
 Վու սիրտդ արդէն մինակ մնացեր
 է . ինչո՞ւ համար կորուստներուդ վրձ
 կորուստ եւելցընես : Սննաւանդ որ
 ես քու գրկէդ շատ հոգիներ յափշ-
 տակերեմ . անոնց տեղը իմ հոգիս
 ընդունէ : Ես ընծան ուրիշի մը չեմ
 ըներ , մինակ քեզի կընեմ . վս զի
 գիտեմ , ո՞վ սիրով լեցւած սիրտ ,
 որ իր յանցանքներուն վրան ապաշ-
 խարելով՝ քեզմէն թողութի խնդրո-
 ղին հառաչանքները լսելով՝ սիրտդ
 կինջնայ : Ես որ համար հատուցումի
 տեղ իմ հոգիս ընդունէ , որ քեզի
 ողջակէզ կրմատուցանեմ կոր : Արան
 երկնաւոր սիրոյ կրակը ինջեցուր , որ
 հոգիս երէ հատցընէ , ուղղի նեղու-
 թիներուդ ու արտմութիներուդ
 մէջը քեզի հաճոյական հոգի մը ըլ-
 լայ . ամէն :

Ա էջ հայր Տէր , ողջոյն , փառք հօր , ու
 վերջ դրամ թողութի . Երէս . 26 :

Մենանք հաղորդութիւն այցելութիւն մը ըրէ, ոնցի իր գթած սրտին համար՝ մեղաւորներուն դարձտայ, վշտացեալները մխիթարէ, աղքատներուն օգնութիւն ընէ, նեղութիւն մէջը եղօղներուն զօրութիւն տայ, ու հոգեվարքներուն չարչարանքով հոգի տըւած ատեննին օգնական ըլլայ:

Յն, չոս տէնտառապի բարութիւնը համար՝ տէնտառապի պարտաւոր:



() ր տօնի

Լ՝ մենա՛սբ սրտին տն մերոյ
յ՛սի ք՛սի :

Յսին սրբին հեղու-լէ՛ր՝ առնանք հա-
ղարդո-լէ՛ խորհո-րդին Տեղս :

Մ եր երկնաւոր վարդապետը, վար-
դապետութիւններուն ու շնորհքնե-
րուն գանձը մեզի պարգևել ուզելով,
ամենանբ հաղորդութե՛ն խորհուրդը
հաստատեց . ու հոն տեղը ահա աս
դասը մեզի կուտայ կոր : Ինէ՛ սովըն-
ցէք, որ հեզ եմ ու խոնարհ եմ
սրտով . * Ուսարո՛ւս յինչն, զէ՛ հեզ
էմ եւ խոնարհ սրբի- || . (Սատթ .
Ժն . 29 :

Արդ՝ ամենանբ հաղորդութե մէջը
 յնին սրտին ըրած հեղութիւ մտմտա՛,
 որ ի՞նչ խոնարհութե վիճակի մէջը
 կիյնայ կոր. անանկ որ մեր սիրոյն
 համար ամեն օր իբրև թէ ինքը զին-
 քը կը պղտիկցընէ կոր: Ար պաշտօ-
 նէին մէկ պարզ ձայնին հնազանդելու
 համար, երկինքէն՝ իր փառքին ա-
 թոռէն՝ իր անջ հօրը աջ կողմէն կինջ-
 նայ կոր. մարդոց աչքին առջևը՝
 բոլոր իր մեծ վայելչութեը մեծու-
 թիէն կը հանելի կոր. ու հացին ու
 գինիին ոչինչ ու պղտիկ երևոյթնե-
 րուն տակը կը պահելի կը ծածկըլի կոր:
 Արկնի և երկրի անձը, որ իր առջին
 միլիօններով սերուիբէները գլուխնին
 ծռելով երկրպագութի կընեն, իր
 անջ հօրը ողջակէզ ըլլալու կերպա-
 րանքին ու վիճակին մէջը կը մտնայ,
 ու անանկով կուգայ՝ խորանին վրայ
 կը տեղաւորելի կոր: Արուն համար:
 Ապերախտ մարդոց համար, որ աս
 բանս կը տեսնան, ու դարձեալ զինքը

բարկացընելէն, հետը չարաչար վար-
 ւելէն, իրեն զրկողութի ընելէն, ու
 իրեն դէմ հայհոյութի ալ ընելէն
 ետ չեն կայնիր կոր: Ասկից աւելի
 մեծ հնազանդութի, հեզութի, ու
 խոնարհութի կրնայ մի ըլլալ: Սա-
 կայն՝ տէրիմ, քու հնազանդութիդ
 ու հեզութիդ՝ ասկից ալ աւելի ա-
 ռաջ կերթայ կոր: Ղուն թող կու-
 տաս կոր, որ պաշտօնեաներդ քեզ
 ձեռընին առնեն, ուզած տեղերնին
 դնեն, մէկ տեղէն մէկալ տեղը տա-
 նին, քաղքի ու գեղերու ճամբա-
 ները ժուռ ածցընեն, մեծերուն
 տները՝ ու աղքատներուն հիւղերը
 (Գուլեպանէրը) տանին: Թող կու-
 տաս կոր, որ քեզ կերակուրի տեղ
 ամեն ուղօղներուն բաժնեն: Աուզէ՛
 խորանին վրան դրւած ըլլաս որ ժո-
 ղովուրդը երկրպագութի ընէ, կու-
 ղէ՛ տապանակներուն մէջը գոցւած՝
 կամ թէ ըսեմ թաղւած մնաս, քե-
 ղի ամենը մէկ բան է՝ հոգդ չէ: Ա՛հ

քրիստոնեաներ՝ սովորեցէք, սրտով
 խոնարհ ու հեղ ըլլալ՝ իրմէն սով-
 րեցէք: Մէջերնիս ո՞վ կայ, որ ա-
 սանկ հեզութիով իր մեծաւորին հը-
 նազանդ ըլլալ ուղէ, չըսեմ ծառայի
 մը կամ պաշտօնէի մը: Մէջեր-
 նիս ո՞վ կայ, որ իր վիճակին կամ
 իր ընտանեացը վայելուչ կարծած
 բանէն զրկուելու ինքը զինքը թող
 տայ, ու սիրտը չինեղանայ: Մէջեր-
 նիս ո՞վ կայ, որ իրմէն վար եղօղ-
 ներուն կամ իր հաւասարներուն
 պէտք եղած բաներուն կամ աղա-
 չանքներուն ասանկ շուտով ու ա-
 նուշութիով հասնի: Մէջերնիս ո՞վ
 կայ, որ իր կամքը ուրիշներուն կա-
 տարել տալուն տեղը, գոնէ երբեմն
 ինքը ուրիշներուն կամքը կատարե-
 լու ջանայ: Մ.Տ, ուրեմն ճշմարիտ
 հեզութիը յնին սրտէն դաս առնենք,
 ու սովորի՞ք: Աս առաքինութիւն՝ յնին
 խիստ սիրելի ըլլալով, ան հոգիները՝
 որ աս առաքինութիւն յնին կրնամ-

Նին, ահարդեօք յձին որչափ հա-
 ճութի ու զուարճութիւն կուտանէ
 Ինքը ըսաւ . * Երանի՛ հեղոց, զէ
 նէ Ժասանգէսցէն զէրկեր ॥ (Սասթ.
 Ե. 5.) Կ . Երանի՛ հեղերուն, զն զէ
 անոնք էն՝ որ աշխարհս կըսպանան, ու
 մարդիկ ալ զիրենք կըսիրեն : Եւհ,
 մանաւանդ եւելօքը երանի իրենց,
 վն զի յձին սիրտը կըստանան, ու
 յն ալ զիրենք կըսիրէ :

Ստմտա՛, որ յձին սիրտը ամենա-
 սուրբ հաղորդութե մէջը ինչ հեղու-
 թիւն ու խոնարհութի կրնէ կոր,
 բնակարանին աղքատութե պատճա-
 ռովը, ու մարդկան ընդունելութեը
 ու վարձունքին պատճառովը : Երաւ
 է, որ հաւատացեալներուն բարե-
 պաշտութիւր՝ մեծամեծ փառաւոր տա-
 ճարներ շիներ է, ու ան տաճարնե-
 րուն մէջը տապանակներով յն յա-
 մենասը հաղորդութե պահած է .
 մանաւանդ որ տեղ տեղ ալ ան
 տապանակները ոսկիով ու անգին

քարերով զարդարւած են : Սակայն
 որչափ եկեղեցիներու մէջ ալ բնա-
 կելու պարտական է, որ աւելի հիւղ
 (գո-լէդ) կամ ծակ մը կերւնայ,
 քան թէ այ բնակարան : Այսու
 ամիւ հոգը չէ. պատիւը ու աղքա-
 տութիւն՝ իրեն մէկ բան է. հերիք է
 որ մարդոց հետ կենցաղավարելու
 կարօղ ըլլայ : Ատեն կըլլայ, որ իր
 տանը՝ իր նստելու տեղին՝ իր սեղա-
 նին պահապանները, մաքուր պա-
 հելու՝ կամ գոնէ վայլած կերպով
 մը պահելու՝ սանկ հոգ մը կընեն,
 կամ թէ բնաւին ալ անհոգ կըլլան :
 Իրենց տանը մէջը ամեն մէկ հան-
 գատութիւնը, ինչուկ չափէ աւելի
 զուարճալի բաները ու զարդարանք-
 ները կրփնտուն . ու ամենեւին հոգ
 չեն տանիր, որ սբ անօթները՝ սբ
 զարդերը՝ ու սբ զգեստները մաքուր
 ըլլան, որ խորանին պաշտամանը
 պիտի ծառայեն. ան խորանին կը-
 սեմ, որ իրենք ալ անոր հաղորդա-

կից են՝ ու անկից կայրին: Իրաւ է,
 որ մեծամեծ թագաւորական եկեղե-
 ցիներուն մէջը քիչմը վայելչութիով
 ու պատուով կը պահուի. սակայն այ-
 նու ամիւ յս երբեմն կը տեսնայ, որ
 աշխրբիս զաւկըները ան պատիւնե-
 րուն ալ կընախանձին, որ փառաց
 թագաւորին մեծութիւնը նայելով՝ ան
 պատիւները ինչ պիտի ըլլան: Մի
 զարմանալի հեղութի ու խոնարհու-
 թիւն սրտին յսի: Ընչուկ աս բա-
 ներուս ալ թող կուտայ, որ իր
 պաշտամանը համար սահմանած զար-
 գերէն զինքը աղքատորենն, իր մար-
 մինովը ու իր անգին արունովը օրհ-
 նուած անօթներէն հանւըցընեն,
 իր ներկայութիովը սբ եղած տա-
 ճարներէն վըռընտեն, ու ինքն ալ
 քանի մը ջերմեռանդներով մուրաց-
 կանի մը պէս աղքատ եկեղեցիի մը
 մէջ սղմի: Ըն տեղը իր ընտրեալ
 ժողովուրդին մէջը գտած պատիւին
 նշանը՝ կընամ ըսել ուրիշ բան չէ,

մինակ ճրագի մը ողորմելի լոյսը, որ
 շատ անգամ մարելու վրայ է, կամ
 երբեմն ալ մարած է, Սակայն աս
 բանիս համար մտքէն ալ չանցընէր՝
 որ վրէժխնդրութի ընէ. այլ լու-
 թիով աս աղքատութիը կըքաշէ՝
 որ մինակ իր սրտին կսկիծ կուտայ.
 վասն զի աս աղքատութիէն կըհաս-
 կընայ, որ թէպէտ ինքը շատ կերպ
 սիրոյ հրաշքներով իր ժողովուրդին
 բարերարութի ըրած է, բայց անոնք
 թերահաւատ ու ապերախտ են: Մէհ,
 յն ինչ կըսէ կոր. սրտի հեղութիը
 ու խոնարհութիը ինէ սովրեցէք, ու
 քաշածներէս սովրեցէք, կըսէ կոր:
 Ի՞նչ որ մեզի ձախորդութի մը պա-
 տահելու ըլլայ, որ մեր աղնուակա-
 նութիը կամ մեր պաշտօնին վայե-
 լած ծառաներուն բազմութիւնէն
 զրկուինք, ու գուցէ երբեմն ալ աղ-
 քատութի ձախորդ վիճակի մը մէջ
 իյնանք, մուրնիս բերենք, որ աս
 աշխարհս՝ յսին ուաւըներուն դնելու

տեղը ըլլալով, ու ինքը աշխարհիս
 ճշմարիտ բացարձակ տիրը ըլլալով,
 ինքը յս՝ որ ամենաւնիւ հաղորդութեան
 մէջն է՝ առաջինը եղաւ, որ ինքը
 զինքը թող տրուաւ, որ աս անպատուութեան
 ու աղքատութեան վիճակին
 մէջը իյնայ: Հիմ կուզէ, որ մեր ունեցած
 բաներէն զրկուինք, որ գուցէ
 անիրաւ կերպով ստացերենք.
 կուզէ, որ ունեցածնիս մեզմէ հեռացրենք,
 վս զի անոնց պատճառովը
 մեր սիրտը իր սրտէն բաժնուելով,
 մեր հոգիին մէջը պատուասիրութի՛ն
 փափկութի՛ն անկարգ ցանկութի՛ն
 ու շահասիրութի՛ն մտած է: Ի՞նչ
 որ ամենաւնիւ հաղորդութեան մէջը
 եղող յսին սրտին հեղութեանը՝ խաղաղութեանը՝
 խոնարհութեանը՝ ու լուութեանը
 նմանելու տեղերնիս, յսին օրինակին
 պտուղը՝ ու ան օրինակին համեմատ
 արժանաւոր վարքին արդիւնքը՝
 տժգոհանքով ու բարկութիւնով
 կորսընցընելու ըլլանք, վայ մեզի:

Թէ որ յսին սրտին հեղութիով ու համբերութիով քաշած բաները մեր վրան ըլլան, ու մենք տժգոհալու ըլլանք, մենք մեզ չիխարենք, անկարելի է՝ որ աս պատուական սրտին ճշմարիտ ջերմեռանդները ըլլանք:

Արջապէս մտմտա՛, որ յսին սիրտը աս սբ խորհուրդին մէջը քաշած անիրաւութիւններուն ու անարգանքներուն համբերելով՝ ի՞նչ հեղութի կրնէ կոր: Արդ մը, որ իրաւի իրմէն ընտրուեր է՝ ու աշխրբիս վրան իր պաշտօնեան ըլլալու սահմաններ է, բայց երբեմն ալ հազարաւոր մեղքերու մէջը գտնուելուն համար անմաքուր եղած է՝ ու իր ձեռքներուն ու սրբապիղծ սրտին մէջը շատ անգամ իրեն մատնութի ընելուն համար յանցաւոր եղած է, որ չանցնիր՝ երկինքէն ան սբ նշխարքին մէջը կըլկանչէ, ուղղի նոր անարգանքներ ու անպատուութիւններ ընգունի:

ու յն վայրկեան մը չուշանալով՝
 անոր կանչելուն կըհնազանդի, իր
 մեծվայելչութիւնը ու սրբութիւնը կը-
 խոնարհեցընէ, ու ինքը զինքը անանկ
 մատնիչին ձեռքը կըյանձնէ: Վրիս-
 տոնեայ մը՝ որ բիւր հազար մեղքե-
 րով յանցաւոր է, ու իր մեղքին
 մէջը անզեղջ է, սրբապղծութիւնով
 խոստովանանք մը ըլլալէն ետքը,
 հաւատարիմ ծառայի կամ բարե-
 րար հոգիի մը պէս ջերմեռանդ կեր-
 պարանքով մը յնին սեղանին կըմո-
 տենայ. յն ալ՝ թէպէտ ներսէն զի-
 տէ, որ ան մարդը իր անգութ թշնա-
 միներուն մէկն է, բայց անոր կան-
 չելը լսածին պէս՝ քահանային ձեռ-
 ւըներովը շուտով մը իրեն ոտքը
 կերթայ, իբրև թէ խաղաղութեան
 համբոյր մը տալով՝ լեզուին վրայ
 կընստի, ու սիրտը կ'ինջնայ. բայց
 սիրտը ինջածին պէս, կըտեսնայ՝ որ
 հազարաւոր սատանայ սրտին վրայ
 տիրացերեն: Վ. յն սրբութե ու փա-

ուաց Թորը, հարկ կըլլայ, որ այն պիղծ
 ոգիներուն մէջը բնակի. սակայն այ-
 սու ամիւ հեզութիով ու խոնար-
 հութիով կը համբերէ կոր, ու ա-
 նանկ անարգ վարմունքներ կը տեսնայ
 կոր, որ աշխրբիս վրայ մարդ մը
 բնաւին չէ քաշած: Հապա այն ա-
 նիրաւութիւններուն ու նախատինքնե-
 րուն համար ալ ի՞նչ ըսենք, որ յս
 ամենասը հաղորդութիւն մէջը շատ
 անգամ չար հերետիկոսներուն ձեռ-
 քէն համբերելով քաշեց. անանկ
 որ որչափ որ դժոխքին ատելութիւնը
 ու չարութիւնը կարօղ էր, ան հերե-
 տիկոսները յսին սը մարմինին վրայ
 ամեն կերպ արհամարհանքները նո-
 րոգեցին: Ատենօք եղած է, որ ան
 անզգամները՝ ամենասը հաղորդու-
 թիւն ծաղը ըրեր անարգերեն, գե-
 տինը թափերեն, ոտքի տակ առեր
 կոխկըռտերեն, ու սիրտ խառնելու
 դարչելի տեղերը նետերեն: Իսկ ին-
 քը՝ ողջակէզ ըլլալու հմբ քշքշեւած

գառնուկի մը պէս բնաւին չհտժգո-
 Տաց, բնաւին դիմադարձութի չը-
 րաւ. ու թէպէտ ան սրբապիղծ չա-
 րագործներուն վրէժխնդրութի ընե-
 լու կարող էր, բայց չըրաւ: Արդ՝
 Տեղութե ու խոնարհութե համար
 ասկից աւելի ուրիշ մեծ օրինակ մը
 կրնայ մի ըլլալ: Ապա ուրեմն ա-
 սանկ խոնարհ ու Տեղ սրտին ջեր-
 մեռանդները, եբոր իրենց եղբօրմէն
 անիրաւութի մը կրտեսնան, որ ան
 ալ թեթեւ բան մը՝ կամ շատ ան-
 դամ ալ ծուռ հասկըցւած է, ին-
 չու հմբ այսչափ տակնու վր կըլլան:
 Ահ, թէ որ յնին սրտին ճշմար-
 տապէս նմանել կուզես, ինչպէս որ
 պօղոս առաքեալ բոլոր հաւատա-
 ցեալներէն կըպահանջէր, (Է. Կորնթ. Է.
 8.) պատիւներուն՝ ու անար-
 դանքներուն մէջը, գովասանքին՝ ու
 յարսաւանքին մէջը, թէ անունդ
 գէշ ելած ըլլայ՝ թէ աղէկ անուն
 ունենաս, թէ մոլորեցուցիչ սեպ-

ւիս՝ թէ շիտակ մարդ սեպւիս, թէ
 քեղ ճանչնան՝ թէ չիճանչնան,
 պէտք է՝ որ դուն անհոգ ու չիմա-
 ցող ըլլաս: Վարձեալ, թէ որ աս
 անձային սիրտը անկեղծաբար կը սի-
 րես, պէտք է՝ որ իրեն ցաւակից ը-
 լաս, որ այսչափ անարգանք քաշեր
 է, ու հիմա ալ իր ժողովուրդին մէ-
 ջը կը քաշէ կոր. պէտք է՝ որ շուտ
 շուտ ու ջերմեռանդութիով սրբու-
 թիւն առնես, ուղղի անթիւ սրբա-
 պրդութիւններով իր սեղանին եղած
 անարգութեւնը համար հատուցում մը
 ընես. աւելի շատ պատարագ պիտի
 տեսնաս, ու ան ալ՝ որչափ կարելի
 է աւելի պարկեշտութիով, ուղղի
 պատարագին ատենը իրեն եղած ան-
 պատուութիւններուն հմբ ալ հատու-
 ցում մը ընես. ու ամեն կերպ ճամ-
 բաները պիտի բանեցընես, որ իր
 սիրով լեցւած սրտին շարունակ այս-
 չափ նորէ նոր անիրաւութիւններ կը
 լան կոր, անոնք ալ խափանես: Վհա

յնին սբ սրտին ջերմեռանդութենը
 զլիսաւոր վախճանը աս է . ուստի
 ասա ասոր համար այսօր յարգու-
 թիով հատուցման ներգործութի մը
 ընելով , իր առջևը յայտարարութի
 մը պիտի ընես ու գոնէ ամիսը մէյմը
 աս հատուցման ներգործութիը պիտի
 ընես , որ սիրտդ նորէն յնին սրտին
 վրայ ցաւակցութիով ու սիրով բոր-
 բոքես , տեսնալով՝ որ ամենասուրբ
 հաղորդութեն խորհուրդին մէջը իրեն
 շատ կերպ անարժան վարմունքներ
 կըլլան կոր :

Ներգործութի հաստատումն :

Սիրելի ու յարգելի փրկիչ իմ և
 անձ յս քս , որ հրաշալի ու զօրաւոր
 չափէ աւելի սիրոյդ պատճառովը
 ամենանսբ հաղորդութեն մէջը գուն
 քեզ ողջակէզ ըրիր , արգեօք սրը-
 տիդ մէջը ի՞նչ բաներ կըմտմտաս ,
 երբ կըտեսնաս , որ շատ մարդու

սրտին մէջը քարսրտութիէն՝ մուաց-
 կոտութիէն՝ ապերախտութիէն՝ ու
 արհամարհանքներէն ուրիշ բան
 չես գտնար: Զերիք չէր, որ մեզ
 փրկելու համար՝ խիստ դժուարին ու
 աշխատալից ճամբան ընտրեցիր:
 Զերիք չէր, որ մեղքերնիս կոնակդ
 շալկած ըլլալով, ու անոնց սոսկալի
 պատկերը միտքդ բերելով, դուն
 քեզ անանկ թողուցիր, որ ինչուկ
 մեռնելու հատնելու դրները՝ ու
 կսկծագին հոգեվարքութե՛հ հասար:
 Զապա ինչու համար դուն քեզ
 թող կուտաս կոր, որ ամեն կերպ
 արհամարհանքները վրադ թափին,
 որչափ որ մարդոց ու սատանաներուն
 չարութիւր կրնայ հասնիլ:

Սրտէս խոնարհելով ու ցաւելով,
 քիւր հազար անգամ քեզմէ թո-
 ղութի կըխնդրեմ, որչափ որ ամե-
 նա՞ք հաղորդութեան պատճառովը
 քեզի անարգանք եղած է: Եւստ
 տեղեր կան, որ սիրտդ արհամար-

Հանք քաշեր է, ու սէրդ անարդը-
 ւեր է. ինչո՞ւ համար ես ան տեղերը
 արձունքովս թրջել ու արունովս լը-
 ւանալ չեմ կրնար կոր: Հատ ան-
 դամ սրբապղծութիւններ ու շատ ան-
 դամ անարժան հաղորդելիւններ ե-
 դած է. ինչո՞ւ համար ես նորէն պա-
 տիւ մը՝ խոնարհութիւն մը՝ ես իս-
 ոչնչացընել մը չեմ կրնար կոր հնա-
 րել, որ անոնց հատուցումը ընեմ:
 Ինչո՞ւ համար ես բոլոր մարդոց սրբ-
 տին արը չեմ կրնար կոր ըլլալ, որ
 անոնց ամենն ալ քեզի ողջակեզ մա-
 տուցանէի, ու որչափ որ քեզ ճանչ-
 նալ չուզող կայ, կամ որչափ որ
 քեզ ճանչնալէն ետքը՝ քեզ ար-
 ժանապէս չի սիրող կայ, անոնց ա-
 մենուն թմրածութեը ու մոռացկո-
 տութեը համար կերպով մը հա-
 տուցում մը ընէի:

Եւ այց ո՞վ սիրելի փրկիչ իմ, ա-
 մենէն աւելի իս ամբըջընօղը ու շատ
 կսկծացընօղը աս է, որ ես ալ ան

ապերախտներուն մէջը գտնուերեմ :
 Ղուն աստուած իմ , որ սրտիս մէջը
 կըթափանցես կըմտնաս . դուն կը-
 տեսնաս կոր , որ բոլոր ապերախտու-
 թիներուս վրայ ի՞նչպէս կըցաւ իմ
 կոր : Ղուն կըտեսնաս կոր , որ ա-
 նոնց հատուցումը ընելու համար՝
 ի՞նչպէս պատրաստ եմ , որ ամեն
 բանը ընեմ ու քաշեմ : Ահա Խոր ,
 որչափ որ աս հատուցման համար
 ինէ բան մը կուզես , ամենն ալ քու
 ձեռքէդ ընդունելու պատրաստ եմ :
 Տէր , դուն ինծի զարկ , ես ան
 ձեռքը կօրհնեմ ու կըպագնեմ ,
 որ ասանկ արդարութիով ինծի կը-
 զարնէ : Արանի ինծի , թէ որ այս-
 չափ անարգանքներուն հատուցումը՝
 ամեն կերպ կարելի տանջանքներով
 ընելու կարող ըլլամ : Այց թէ որ
 աս շնորհքիս արժանի չեմ , գոնէ
 իմ անկեղծ փափագս հաճութիով
 ընդունէ , ու շնորհքովդ իմ կամքս
 զօրացուր . ու անանկ ըրէ՝ որ դրած

առաջագործիս գործունեայ ըլլայ .
 ահա կառաջագրեմ , որ ասկից ետքը
 բնաւին չիմոռնամ , ամենայն հաղոր-
 դութե մէջը իմ փրկիչս սիրեմ ու
 սպատուեմ :

Ա ից հայր Տէր , ողջոյն , ժառագ հօր , ու
 զէրը որո՞ւմ աղօթե՛ք . Էբէս . 26 :

ՄՏԸ Ծ ՈՒԹԻԻՒՒՆ

Սասն առաջին ուրբաթի աւուրց
ամ ամսոց :

Յի քի քի Ռույ «իւրբ» հօր
«իւրբ» է :

Սասն՝ մտմտա՛, որ յսի քսի ան
մերոյ սիրտը՝ ի նչպէս սիրով լեց-
ւած հօր սիրտ է . անանկ որ աս
պատճառիս համար արժանի է՝ որ
իրեն երախտագիտութի ընես : Ա-
բոր հայր մը սրտանց իր զաւկընե-
րուն վր սաստիկ ու բանաւոր սէր կու-
նենայ , ան սիրոյն զլիսաւոր ներգոր-
ծութիները՝ ու նշանները՝ երեք են :

Աստուծոյ ասանկ սէր ունեցող հայրը՝
 շարունակ աս կրմամտայ, ու չիյոգ-
 նելով աս բանիս կաշխատի, որ ա-
 նոնց աղէկ բարոյական կրթութիւն
 մը տայ, անոնց առատ ժառանգու-
 թիւն մը պատրաստէ, ու անոնց
 հարկաւոր ապրուստը հոգայ: Ասոր
 համար սիրական հօր մը քաջած
 աշխատանքը՝ խիստ շատ է. ցորեկը
 կը քրտնի. գիշերը չիքնանար. ջանքը
 բնաւին ձեռքէ չիձգեր. շատ անգամ
 ողջութիւն կը կորսնցընէ, ու կեանքը
 կը կարճեցընէ. գրեթէ ինքը զինքը
 կրմոռնայ, որ զաւկըներուն պէտք
 եղած ու շահաւոր եղած բաները
 հոգայ: Բայց աս աշխրքիս վրայ ար-
 դեօք հայր մը կը գտնուի, որ յսին
 նմանելու կարօղ ըլլայ: Ան ինքը
 բոլոր իր մահկանացու կեանքին մէ-
 ջը իր անձովը աշխատեցաւ, որ իր
 զաւկըներուն բարոյական կրթութիւն
 մը տայ. անոնց համար երկինքէն
 սրբութիւն ու արդարութիւն կատա-

րեալ վարդապետութի մը բերաւ .
 ան վարդապետութիը իր բերնովը
 անոնց ականջը դրաւ . անթիւ գէմ
 զրուցօղներուն մէջը ան վարդապե-
 տութիը սովորեցուց , հրաշքներով
 ալ հաստատեց , ու սբ եկեղեցին ալ
 ինչուկ աշխրբիս ետքը մեզի մօր
 տեղ ցրցընելով , ան վարդապե-
 տութիւնը ան եկեղեցիին մէջը ա-
 ւանդ ձգեց : Իսկ մեզի համար ստա-
 ցած ժառանգութիը ո՞րն է : Ար-
 կինքին թագաւորութին է . անանկ
 թագաւորութի մը , որ զուարճու-
 թիներով՝ հարստութիով՝ ու փառ-
 քով լեցուն է , ու մէջը ողորմելի
 բան մը՝ տրտմութի մը՝ ու վախ մը
 չիմտնար : Իայց աս ժառանգութիը
 մեզի ստանալու համար , որչափ աշ-
 խատանքներ՝ նեղութիներ՝ չարչա-
 րանքներ՝ նախատինքներ՝ ու ցաւեր
 քաշեց . անանկ որ իր երակներէն
 բոլոր արունն ալ թափեց , ու վա-
 տահամբաւ փատի մը վրայ կեանքն

ալ կորսնցուց : Սակայն աս ալ հե-
 րիք չէ : Թէ որ կուզենք հասկընալ,
 որ ասանկ բարի հօրերնուս սրտին
 սէրը որչափ եւելօք եղած է, պէտք
 է՝ որ աղէկ ուշադրութի ընելով
 աս ալ մտմտանք, որ ամենասուրբ
 հաղորդութեան խորհուրդին մէջը՝
 մեր մարմինին ու մեր հոգիին հա-
 մար ի՞նչ ընտիր ու անգին կերա-
 կուր պատրաստեր է : Այլ լսած
 ունի, որ հայր մը իր զաւկըները իր
 մարմինովը կերակրէ : Սակայն ահա
 յսի քսի ան մերոյ սիրտը՝ իր զաւ-
 կըներուն համար ինչուկ աս չափա-
 ղանց սէրը հասեր է : Այն հաղորդու-
 թեան մէջը՝ ինքը զինքը մեր կե-
 րակուրը, մեր կեանքը, ու մեր ամեն
 բանը ըրած է : Արդ՝ թէ որ հայր
 մը իր զաւակը կրթելու՝ ու սնուցա-
 նելու համար բոլորովին զբաղած ըլ-
 լայ, իսկ զաւակը՝ իր հօրը բնաւին
 երախտագիտութե նշան մը ցըցընե-
 լու չըլլայ, անանկ զաւակին սրտին

համար ի՞նչ ըսելու է : Ա՛հ յս իմ ,
 սիրելի հայր իմ , հապա ի՞նչ ըսե-
 լու է , որ զաւկըններուդ շատը՝ քեզի
 շնորհակալութի մը ընելու ալ հոգ-
 չեն ըներ , որ սիրտդ՝ անոնց բիւրա-
 ւոր արտառոց սիրոյ նշաններ ցը-
 ցուցած է : Գո՞նէ աս ըսելու է , որ
 քու աշխատանքներդ ու բարերա-
 րութիւններդ չեն ճանչնար ու բանի
 մը տեղ չեն դներ կոր : Ա՛հ , աս ան-
 գութներուն մէջը գո՞նէ ես չիգտնը-
 ւիմ , որ իրենց ապերախտութիւնովը
 յսի քսի ան մերոյ ամենաւր սիրտը
 կը կսկծցընեն :

Արկրորդ՝ մտմտա՛ , որ յսի քսի
 ան մերոյ սիրտը՝ ի՞նչպէս տրտմած
 հօր սիրտ է . անանկ որ աս պատ-
 ճառիս համար՝ քէնէ աս կուզէ , որ
 իրեն ցաւակից ըլլաս : Մէկ զաւկին
 մինակ ապերախտութիւնը հերիք է , որ
 հօրը սիրտը կսկիծով լեցընէ : Հա-
 պա որչափ աւելի կսկիծ կուտայ , թէ
 որ ապերախտութեւնը վրան՝ անիրա-

ւութի ու նախատինք եւելցընելու
 ըլլայ : Աբոր հայր մը կըտեսնայ, որ
 իր մէկ անուղղայ զաւկին համար
 քաշած աշխատանքներուն ամենն ալ
 պարապը գացեր է. եբոր կըտես-
 նայ, որ ինքը իր ճակտին քրտինքո-
 վը անոր հաց կ'առնէ, իսկ անիկա՝
 արհամարհանքով գետինը կըզար-
 նէ. վերջապէս եբոր կըտեսնայ, որ
 անօրէն ձեռւըներովը վրան կըվազէ,
 գետինները կըքշկրտէ, ձեռքովը
 (Էռ-ձրո-ի) կըզարնէ, ու գեղացիի
 պէս ոտւըներովը (Բէ-Ռէ) կըզարնէ.
 արդեօք ան հօրը սիրտը՝ ինչ սրը-
 տադողի մէջ կըմտնայ : Արդ՝ ո՞վ
 կրնար մտքէն անցընել, որ յնին
 հայրական սիրտն ալ իր զաւկընե-
 րուն պատճառովը ասանկ չափէ
 դուրս ցաւերու պիտի գայ : Սակայն
 ինչ ըսեմ : Այսչափ սէր ցըցընե-
 լէն ետքը՝ կըտեսնայ կոր, որ շա-
 տերը՝ չէ թէ մինակ երախտագի-
 տութի մը ընելու միտք չեն բանե-

ցըներ, հասկա նաև շարունակ զինքը
 կրբարկացընեն ու կանարգեն: Ար-
 տեսնայ կոր, որ երեսուն երեք տար-
 ւան քաշած աշխատանքները ու նե-
 ղութիւնները՝ անոնց շարութեւը պատ-
 ճառովը պարապը գացեր է, ու թէ-
 պէտ ինքը իր յաւիտենական թա-
 գաւորութեւ գրները անոնց բանալու
 համար՝ ցաւագին չարչարանքները
 ու կսկծագին մահը յանձը առեր է,
 բայց անոնց օգուտ մը չունի: Իր
 զաւկըները խիստ սիրելով, շարու-
 նակ անոնց համար շատ կերպ աշ-
 խատանք քաշէ, ու անոնք ասանկ
 անգին աշխատանքները բանի մը
 տեղ չիղներով՝ իրենց յաւիտենա-
 կան դատապարտութիւր ուղեն. ինչ-
 պէս կըլլայ՝ որ ասանկ սիրական հօր
 սիրտը մեծ տրտմութիւով չիլեցւի:
 Սակայն իբրև թէ ասոնք քիչ էին,
 անոնց վրայ խիստ աւելի հայրական
 սէր ունենալուն համար՝ ըբ հաղոր-
 դութեւ խորհուրդը հաստատեր էր,

պէտք եղաւ՝ որ հոն տեղն ալ իր
 անձը անոնց ձեռքէն անթիւ նախա-
 տինքներ քաշէ : Ինչ սրբապիղծ
 մարդիկ եղերեն, որ իրենց անմա-
 քուր լեզուովը ան ամենաւր մարմի-
 նը իբրև թէ պղծերեն, ու ամենա-
 գարշելի մեղքերով հոտած սրտեր-
 նուն մէջը ան արունը անարժանապէս
 լեցուցերեն : Ինչ անզգամ միջիկ
 եղերեն, որ սբ անօթներէն դուրս
 հաներեն, կատաղութիով գետինը
 թափերեն, ոտքի տակ առեր կոխ-
 կռտերեն, հողի մէջ ու գարշութի-
 ներու մէջ նետերեն, ինչուկ նաև
 անբան անասուններուն կեր տալու
 պէս՝ անոնց առջևը ձգերեն : Յս քս
 արն մեր այսչափ սոսկալի արհամար-
 հանքներ քաշելէն ետքը, թէ որ
 տեսնալու ըլլայ, որ դուն ալ իրեն
 հաւատարիմ զաւակը եղողի մը պէս
 պարծենալովդ՝ վրան գութ չունիս,
 ու քաշած անիրաւութիւններուն հմբ
 բնաւին կսկիծ մը ցաւ մը չես ցըցը-

ներ կոր, ան ատենը իրաւցընէ սըր-
 տին տրտմութիւր չափէն աւելի կե-
 ւելնայ, ան ատենը իրաւցընէ պէտք
 է ըսել՝ որ յս քու աչքիդ առջևը
 օտարականի մը պէս է, ու գրեթէ
 զղջացեր է, որ ինչո՞ւ համար ան-
 հաւատարիմ ժողովուրդին մէջէն
 քեզ ընտրերէ՝ որ իր ցաւագին սըր-
 տին զուարճութի ու զօրութի տըւող
 մը ըլլաս: Աւստի մտիկ ըրէ՝ որ ի՞նչ
 կըսէ կոր, ու վրան գթութիւն ըրէ:
 Ահա ցաւերուն պատճառովը հառա-
 չելով, ու վերաւորւած սիրտը քե-
 ղի ցըցընելով, հոգիիդ մէջը խո-
 րունկէն իր ձանը ականջդ կը հասցընէ
 ու ասանկ կըսէ կոր. * Իսապուհ է-
 ղէն հեժու-Լէ, Ի՛մ, սիրտ Ի՛մ լէ Եղե-
 րարմու-Լէ ॥ (Արեւմ. ողբ. ւ, 22.)
 Ի՛մ. Ի՛մ հոտաւանչա ի՛նչս շատ Եղտ-
 ու սիրտս արարմու-Լէ ո՞վ լէց-Եցտ:

Արրորդ՝ մտմտա՛, որ յսին սիրտը՝
 ի՞նչպէս երեսէ ինկած հօր սիրտ է.
 անանկ որ աս պատճառիս համար

քէնէ փոխարէն մը ու օգնութի մը
 կուզէ : Միտքդ անանկ բեր , որ
 խիստ սիրական բարերար հայր մը
 կըտեսնար կոր , որ զաւկըններէն մէկ
 քանին՝ անիրաւ տեղը՝ գաւաղաններ
 րով զինքը ծեծերեն , ու անգութ
 փատով մը մարմինը շատ տեղէն
 խոցերեն : Անեղձը գետինը ինկեր
 փուեր է , կուլայ կողբայ , կէս մե-
 ռել մը եղեր է , ու արուններուն մէջը
 պլլըւերէ : Աս վիճակիս մէջը ե-
 ղած ատենը , մինակ մէկ օգնութի
 մը կայ՝ որ իրեն կրնայ ըլլալ . ք՛ որ
 զաւկին մէկը իրեն հաւատարիմ ըլ-
 լալով , դառնայ տուն գայ՝ գետնէն
 վերցընէ , խոցերուն դեղ դնէ , ու
 երկան ատեն հիւանդութե մէջը ի-
 րեն ընկերութի ընէ : Սակայն իր
 ցաւը որչափ աւելի մեծ կըլլայ , թէ
 որ տեսնայ՝ որ ամենն ալ զինքը ե-
 րեսէ ձգերեն , զաւկըններուն մէկն ալ
 չերենար՝ որ իրեն օգնութի ընէ ,
 կամ թէ հազիւ դուռը կուգան չն

գար, անանկ կերպարանքէ ելած ու
 հոգեւորքութե մէջ գտնալով, հա-
 զիւ մէյժը երեսը կընային, ու օգ-
 նութի մը չըրած՝ նորէն տնէն կել-
 լան կերթան: Ա՛հ, յնին հայրա-
 կան սրտին ցաւը՝ խելքով չի հաս-
 կըցւիր: Ա՛ն հայրը՝ ինքն է, որ իր
 դառն չարչարանքներուն ատենը՝ իր
 խիստ սիրելի զաւկընները ասանկ ան-
 գութ կերպով զինքը երեսէ ձգե-
 ցին, ու հիմա ալ շատ անգամ ար-
 դար հոգիները՝ ու նաև իրեն նըւի-
 րած անձինքներն ալ՝ աս բանս իրեն
 կընեն: Ար խիստ սիրելի աշակերտ-
 ները՝ գեթ սեմանի պարտէզին մէջը
 տեսան, որ տրտմութիէն հոգեւոր-
 քութե հասերէր, ու հառաչանք-
 ներուն տանջանքներուն՝ սրտերնին
 բնաւին չի շարժեցաւ, խորունկ քու-
 նի մը ինկան: Արենց աչքին առջևը
 յժը բռնեցին, դատաստանները քա-
 շեցին, իսկ իրենք ամենը մէկէն յժը
 մինակ թողուցին, ու վախերնուն

փախան : Մէջերնին յովհաննէսէն
 ուրիշ ո՞վ եղաւ, որ յսին ետքի շունչ
 առած ատենները քովը կենայ : Իրենց
 անհոգութենը, իրենց վախուն, ու ի-
 րենց թերահաւատութենը հմբ, յսին
 տրտմութիւններուն մէջը ընկերութի-
 ընելէն քաշեցան : Ահ, հիմա ալ
 որչափ արդար հոգիներ կան, որ ի-
 րաւի կըտեսնան, որ յս շատ մարդ-
 իրեն զաւակ է ըրեր, իսկ անոնք յսին
 գէմ ապստամբեր՝ զինքը կանարգեն
 կոր. բայց իրենք յսէն հեռու կը-
 կենան : Անանկ եղեր է, որ եկեղե-
 ցին երթալու՝ յսին համառօտ այցե-
 լութի մը ընելու ձանձրանալով,
 քիչ մը նեղութի քաշելու հարկ
 ըլլալը մտմտալով, աշխրբիս մարդոց
 խօսք նետելէն վախնալով, ու ամեն
 բանէն աւելի անանկ թերահաւա-
 տութի մը ըլլալով՝ որ յսին խաչէն
 ու չարչարանքներէն գայթակղութի
 մը կառնեն, յսին բարերարութի-
 ները տեսնող զաւակները՝ անանկ

պաղերենն ու անհոգ եղերենն, որ
 մտւոյններնուն ալ չեն անցըներ, որ
 եկեղեցիներուն մէջը յսին ընկերու-
 թիւն ընեն, կամ սք պատարագը
 տեսնան, որ ան սուրբ պատարագին
 մէջը իրենց փրկութեւնը համար յս
 ինքը զինքը ողջակէզ կըմատուցա-
 նէ: Անիկ ըրէ, որ երեմիա մար-
 գարէին բերնովը ի՞նչպէս կըգանդ-
 աի կոր: * Եւստիոս ըստիոս պոյս,
 զէ էս հատուցէն ե հեծէն, ե ոչո՞ք է՝
 որ Տիեօօսըն զէն ||. (Արեմ. ողբ. ւ.
 21.) Եւստիոս ըստիոս, Եւստիոս ըստիոս. էս
 ին սրբին սրբանութեւնը համար կո-
 իողէմ իոր, Բոյս հարդ հը չէն գոյնս
 իոր՝ որ էս Տիեօօսըն: Աւտաի չըլայ,
 որ դուն ալ աս ապերախտ զաւկը-
 ներուն մէջը գտնըւիս. չըլայ՝ որ
 անհոգ ըլլալովդ՝ հորդ յսին սրտին
 տրտմութիւնները եւեցընես: Աւ-
 նաւանդ նայէ, որ քու ջանքովդ, սք
 հաղորդութե մէջը յսին սյցելութի
 ընելովդ, որչափ կարելի է՝ շատ ան-

գամ պատարագ տեսնալովդ, որչափ
 որ ուրիշները իրեն անիրաւութի ու
 մոռացկոտութի ըրած են, անոնց
 համար փոխարէն մը հատուցում մը
 ընես: Ան ատենը դուն քեզի կրնաս
 խօսք տալ, որ ինչպէս որ դուն իր
 սրտին տանջանքներուն ընկեր կըլ-
 լաս, նմանապէս ինքն ալ քեզ կը-
 կանչէ՝ որ իր սրտին զուարճութի-
 ներուն մասնակից ըլլաս: Աւստի ո՛վ
 որ գողգոթա լերանը վրայ՝ յսին
 ընկերութի ընելու՝ ու յսին հոգի
 տըլած ատենը իր ոտքին տակը իր
 հաւատացեալներուն հետ անշարժ
 կենալու պատրաստ չէ, աս ջերմե-
 ուանդութիւնը պտուղներուն ու զուար-
 ճութիւնը կատարեալ համը առնելու
 թող յոյս չունենայ. չէ, յոյս չու-
 նենայ: Իրաւ է, նք անձամին, յով-
 հաննէս, ու մագդաղենացին բաղդ
 ունեցան, որ յսը խաչէն վար առ-
 նելէն ետքը՝ բացւած վէրքին մէջէն
 նայեցան՝ սիրտը տեսան: Իայց ին-

չուկ յնին ետքի շունչն ալ իրեն
ընկերութի ըրին, տեղերնուն չիշար-
ժեցան : Աւստի թէ որ դուն ալ
կուզես, որ իրենց մխիթարութիւնե-
րուն մասնակից ըլլաս, անոնց նմանէ :

Ա. հարածախանը ընդունելէր էփր, հարս-
տան ներքոյն լինելու ըրէ, ինչ-
պէս որ լինել տրտած է. էրէս. 101 :

Վաշտեաց տէր ընդ իմ՝ զղջացեալ
սրտին.

յիշեալ զարիւն քո, զի արիւն է իմ.
քանզի դու ինձ զայն՝ ետուր ՚ի
խաչին.

Ես մեղայ, և դու՝ կացեր ՚ի պատ-
ժին:

Յիշեմ և զառ հայր՝ բարբառ քո
ձայնին,

յաղերս թողութն՝ խաչհանուաց
գնդին.

՚ի նոյն զըթալեր՝ հայեցուածդ
ակին,

և յիս ար հայեաց, զի մի եմ
նոցին:

Թէ յաւերժացայց՝ յանդունդ ար-
հարին,

անկեալ 'ի ճիրանս՝ թշնամեաց
քոյին .

ցնծասցեն անշուշտ՝ դրժոխք խմբո-
վին ,

այլ քեզ եղիցին՝ ցաւք անհը-
նարին :

Ս'ի զայս յաղթանակ՝ առցէ ատե-
լին ,

մի քո վրէժք , այլ գուձք՝ յիս
հանդիսացին .

բաց տր ե լայնեա՝ ըզսիրտ սուրբ
քոյին ,

որ առ քեզ դառնամս՝ որդւոյս
ցաւագին :



Ստղծանի աստիճան Տէր յն Կն :



Տր ողորմեաց :

Քս ողորմեաց :

Տր ողորմեաց :

Յս լուր մեզ :

Քս անսա մեզ :

Հայր երկնաւոր անձ , ողորմեաց մեզ :

Որդի փրկիչ աշխարհի անձ , ողորմեաց մեզ :

Հոգի սբ անձ , ողորմեաց մեզ :

Սբ երրորդութի մի անձ , ողորմեաց մեզ :

Յս որդի այ կենդանւոյ .

Յս ճառադայթ հօր .

Յս ճաճանչ յաւիտենական լուսոյ .

Յս թագաւոր փառաց .

Յս արեգակն արդարութե .

ողորմեաց մեզ :

- Յս որդի մարիամու կուսին .
 Յս սիրելի .
 Յս սքանչելի .
 Յս անճ հզօր .
 Յս հայր հանդերձելոյ յաւի-
 տենին .
 Յս մեծի խորհրդոյ հրեշտակ .
 Յս ամենակարօղ .
 Յս ամենահամբեր .
 Յս ամենահնազանդ .
 Յս հեղ և խոնարհ սրտիւ .
 Յս ողջախոհութե սիրօղ .
 Յս սիրօղ մեր .
 Յս անճ խաղաղութե .
 Յս պարգևատու կենաց .
 Յս օրինակ առաքինութեց .
 Յս նախանձայոյզ հոգւոց .
 Յս անճ մեր .
 Յս ապաւէն մեր .
 Յս հայր աղքատաց .
 Յս գանձ հաւատացելոց .
 Յս հովիւ քաջ .
 Յս լոյս ճշմարիտ .

Յս իմաստու թի յաւիտենական .

Յս բարութի անհուն .

Յս ճանապարհ մեր և կեանք .

Յս ցնծութի հրեշտակաց .

Յս թագաւոր նահապետաց .

Յս վարդապետ առաքելոց .

Յս ուսուցիչ աւետարանչաց .

Յս արիութի մարտիրոսաց .

Յս լոյս խոստովանողաց .

Յս մաքրութի կուսանաց .

Յս պսակ ամ սրբոց .

Քաւիչ մեր լեր . խնայեա՛ի մեզ
յն :

Քաւիչ մեր լեր . անսա՛ մեզ յն :

Յամ չարէ .

Յամ մեղաց .

՛Ի բարկութէ քումմէ .

՛Ի դարանակալութեց դիւին .

՛Ի յաւիտենական մահուանէ .

՛Ի ստունդանութենէ ազդեցու-
թեց քոց .

Սո՛ խորհրդոյ սբ մարդեղութե
քո .

ողորմեաց մեզ .

չերծո՛ շմեզ յն :

Մ Ծննդեան քո .

Մ Ժանկութե քո .

Մ Խնայեալս Վարուց քոց .

Մ Կաշխատութեց քոց .

Մ Խաղնապելոյ և Հարչարանաց քոց :

Մ Կուարելոյ քո .

Մ Ժաշու և Թաղման քո .

Մ Կարութե քո .

Մ Կամբարձման քո .

Մ Կնծութեց քոց .

Մ Կառաց քոց .

Վառն աստուծոյ՝ որ բառնաս զմեզս
աշխարհի . խնայեալի մեզ յիսուս :

Վառն աստուծոյ՝ որ բառնաս զմեզս
աշխարհի . անսա մեզ յիսուս :

Վառն աստուծոյ՝ որ բառնաս զմեզս
աշխարհի . ողորմեաց մեզ յիսուս :

Յս լուր մեզ :

Քս անսա մեզ :

զերծն զմեզ յս :

Լ. ԴՆԷ:

Տը յն քն, որ ասացեր, թէ՛ հայ-
ցեցէք՝ և առնուցուք, խնդրեցէք՝ և
գտջիք, բախեցէք՝ և բացցի ձեզ .
աղաչեմք զքեզ՝ տուր մեզ որ հայ-
ցեմքս զտենչումն անձային սիրոյ քո,
զի յամ սրտէ բանիւք և արդեամբք
սիրեսցուք զքեզ, և մի բնաւ դա-
դարեսցուք փառաբանել զքեզ, որ
կենդանի ես և թագաւորնս ընդ հօր
և ընդ սրբ հոգւոյն անձ գոլով՝ ի
յաւիտեանս յաւիտենից, ամէն:

Տը յն քն, զերկիւղ և զսէր մարդ-
կութն քո օծեցելոյ անձութիւն՝ տուր
մեզ հանապաղ ունել յանձինս մեր .
քանզի ոչ երբէք անտես առնես
զնն, զորս հաստատեալ ունիս ի
սերտ սիրելութն քում, որ կենդա-
նի ես և թագաւորնս անձ գոլով
ընդ ամ յաւիտեանս, ամէն:

ԵՂՏԵՅՐ ՈՒԹՒՒՆ

Ամենամբ սրտի ան մերոյ յնի քնի :

Աստուծոյ խաղախն Տեղը, նէ անձանայ
Եկեղեցոյն Տեղը՝ որ կըսեն ին գա-
փէլլա, յնի խնի քնի Տեղոյ անձանայ
սրտին Եղեայրու-լէլէ կանոնաբար հաս-
տատարած է, աս պայմանով, որ Բո-
լոր անձերին անպարտաւոր հաստատու-
ցեանքերը աս Եղեայրու-լէլէ գրեւոր-
կարող ըլլան :

Աս Եղեայրու-լէլէ գրեւորները, պէտք
է՛ որ յնին անձերը աս կերպով զե-
րաստութիւն զնեն, ան անանկ
գրեն :

Աս (Ա. Ա.) կըբաղձամ, որ յնին
փառքը միշտ աւելի շատցնեն՝ որ

մեզի համար խաչին վրայ մեռաւ,
 նաև իր սրտին փառքը՝ որ ամենաւր
 հաղորդութեն խորհուրդին մէջը վրա-
 նիս սիրով բորբոքած է. ու կրբաղ-
 ձամ, որ աս սիրոյ խորհուրդին մէ-
 ջը՝ որչափ որ մարդիկ զինքը կրբար-
 կացնեն՝ անոնց համար հատուցում
 ընեմ: Աս պատճառով ուրիշ գրեած
 եղբայրներուն հետ միաբանելով՝ ես
 ալ աս բարեպաշտ միաբանութե
 կրգրելիմ, որ աս եղբայրութեան
 տրեած նր ներողութիներուն մաս-
 նակից ըլլամ, ու աս եղբայրութեը
 մէջը իմ մեղքերուս քաւութեը հա-
 մար ու քաւարանին նր հոգիներուն
 օգնութեը համար եղած հոգևոր
 բարիքներն ալ վայելեմ:

Յս իմ, աս բարեպաշտ միաբանու-
 թեը գրեած եղբայրներուն ամենն
 ալ՝ քու նր սրտիդ մէջը պահէ, որ
 քու անձային սիրովդ բորբոքին, ու

քու անձային պատուիրաններդ ու ի-
րենց վիճակին պարտաւորութիւնքը
ամբողջապէս կատարեն . ամէն :

Ըս էղբայրո՛ւնէ՛ գրած էղբայրնե՛-
րո՛ւնդ պարտաւորո՛ւնէ՛ր :

Ը՛նէն օր ջերմեամբո՛ւնէ՛ն՝ յսին
սրբին հայր մեր հը, ողջոյն հը, ու
հաւատամք հը բսեղեղ էրբը, ու հա-
տաւանդ ողբէր բնէն .

Ո՛վ սիրտ քաղցրագու՛թ՝ խմոյ
յիսուսի ,
տուր ինձ միշտ սիրել ըզքեզ ա-
ւելի :

ՆԵՐՈՂՈՒԹՒՒՆԻՔ

Հորհրդանք Եղբայրուքէ ամենասուրբ
սրբի քն Տերոյ յնի քնի:

Ներողութիւնները չիդրած, աս
պէտք է հասկըցընենք, որ յնին ա-
մենամբ սրտին ջերմեռանդ եղօղնե-
րուն՝ առաջուց ալ շատ սրբազան
պապեր կերպ կերպ ներողութիւներ
տըւերէին. սակայն պիտս եօթնե-
րորդ սրբազան պապը՝ աս եղբայ-
րութե գրւած եղբայրներուն աս նե-
րողութիւնները շնորհեց ՚ի մշտնջենա-
ւորս, անանկ որ աս ներողութիւնները
քաւարանին նր հոգիներուն օգնու-

Թեր համար ալ շահելու կարող ըլլան : Արդ՝ շնորհաւծ ներողութիւնները ասոնք են :

Նախ՝ Գլուած օրերնին , թէ որ խոստովանանք ըլլան , սրբութիւն առնեն , ու սրբազան պապին դիտաւորութեր աղօթք ընեն , լիակատար ներողութի կըշահին : Աճիւ՝ որ 'է 7 . Գարգի . 1801 :

Երկրորդ : Յին ամենաւր սրտին օրը , կամ անկից ետքը առաջին կիրակին , թէ որ խոստովանանք ըլլան , սրբութի առնեն , ու սրբազան պապին դիտաւորութեր աղօթք ընեն , լիակատար ներողութիւն կըշահին : Աճիւ՝ որ 'է 7 . Գարգի . 1801 . և Վճիւ՝ որ 'է 12 . Եղեւի . 1803 :

Երրորդ : Ամեն ամսուն առաջին ուրբաթ , կամ առաջին կիրակի օրը , թէ որ խոստովանանք ըլլան , սրբութիւն առնեն , ու սրբազան պապին դիտաւորութեանը աղօթք ընեն , լիակատար ներողութիւն կըշահին :

Ս ճիւղ՝ որ 'ի 15. յուլիսի. 1803.

և ճիւղ՝ որ 'ի 7. յուլիսի. 1815:

Չորրորդ: Ասկից զատ՝ ամեն մէկը իր կամքովը մէկ ամսը և ան մէջը որ օր որ կուզէ, թէ որ ան օրը խոստովանանք ըլլայ, սրբութի առնէ, ու սրբազան պապին դիտաւորութեը աղօթք ընէ, լիակատար ներողութի կըշահի: Ս ճիւղ՝ որ 'ի 15. նոյեմբերի. 1802:

Հինգերորդ: Ս'եռնելու ատենը՝ զըջում ընելով, թէ որ բերնով ալ չիկարենալով՝ գոնէ սրտանց յնին սբ անունը տալու ըլլան, լիակատար ներողութի կըշահին: Ս ճիւղ՝ որ 'ի 7. փետրի. 1801:

Ա յերորդ: Հնին ամենանսր սրբաին տօնէն առաջ՝ չորս կիրակի օրերը կարգաւ, եօթը տարւան ու եօթը քառասունքի մասնական ներողութի:

Առնիւնտերորդ: Ղարձեալ՝ աս եղբայրութե գրւած եղբայրները, որչափ որ օրւան մէջը ջերմեռանդութիով

բարեպաշտ գործք մը ընեն, ամեն
մէկ գործքին համար վաթսուն օրւան
մասնական ներողութիւն կըշահին :
Ս ճիւղ՝ որ 'ի 7 . Դարպի . 1801 :

Ըս պէտք է գիտնալ, որ աս եղ-
բայրութիւն գրւած եղբայրները՝ աս սբ
ներողութիւններուն ամենն ալ կրնան
շահիլ . ու պարտական չեն, որ
հռովմային մէջը եղած եղբայրութիւն
եկեղեցիին կամ ուրիշ եկեղեցիի մը
բուն տեղը երթան այցելութիւն ընեն .
այլ հերիք է՝ որ վերը յիշած ամեն
օրւան պարտքերնին կատարեն . քի,
մէկ հաւատամքը, ու հայր մերը, մէկ
ողջոյնը, մէկ հառաչական աղօթքը
ընեն : Ս ճիւղ՝ որ 'ի 20 . Դարպի . 1802 :

Ըսոնցմէ զատ՝ յոթն 1805 . օտո-
րիւն . 2 . աս եղբայրութիւն գրւած եղ-
բայրներուն ուրիշ ներողութիւներ
ալ շնորհեցաւ 'ի մշտնջենաւորս,
անանկ որ ան ներողութիւնները՝ քա-
ւարանին սբ հոգիներուն օգնութիւնը
համար ալ շահելու կարօղ ըլլան .

արդ՝ ան ներողութիւններն ալ հոս
տեղս զնենք : Ուստի

Ու՛շէրորդ : Որչափ որ ներողու-
թեց սբ ժողովքը յամին 1777 .
յուլիսի . 9 . ըրած վճիռին մէջը՝
հռովմայի քաղքին եկեղեցիներուն
օրէ օր շնորհւած ներողութիւնները
բացատրեր է , ան կարգին վրայ
հռովմէական ճաշոցին մէջը յիշւած
օրերը՝ եղբայրներուն մէջէն ո՛վ որ
իր եղբայրութենը եկեղեցին , ց՞ . Ին
գաւթէլու ըսւած սբ անձանայ եկե-
ղեցիին այցելութիւն կրնէ , ու հոն
տեղը սրբազան պապին դիտաւորու-
թենը աղօթք կրնէ , ան ներողութի-
ւները կըշահի : Իսկ օրերը ու ներո-
ղութիւնները ասոնք են . ց՞ :

Սե՛ծ պաքին մէջը : Առաջին չո-
րեքշաբթին՝ որ Ինչորոց օր կըսուի ,
ու չորրորդ կիրակին , տասներհինգ
տարւան ու տասներհինգ քառսունքի
ներողութի : Աւագ հինգշաբթի օրը ,
լիակատար ներողութի : Աւագ ուր-

բաթ ու աւագ շաբաթ օրը, երեսուն տարւան ու երեսուն քառսունքի ներողութիւն: Աւրիշ օրերը, թէ կիրակի օր ըլլայ՝ թէ բանի օր ըլլայ, տասը տարւան ու տասը քառսունքի ներողութի:

Օտակին: Արակի օրը, լիակատար ներողութի: Անկից ետքը ինչուկ ութերորդ օրը, քի՛ն որ կիրակիին օրն ալ հետ առնելով, երեսուն տարւան ու երեսուն քառսունքի ներողութի:

Շամբարձումին օրը, լիակատար ներողութի:

Շողեգալուստին: Արակիէն առաջ եղած շաբաթ օրը, տասը տարւան ու տասը քառսունքի ներողութիւն: Արակի օրը, ու անկից ետքը ինչուկ շաբաթ օրը, երեսուն տարւան ու երեսուն քառսունքի ներողութի:

Ղեկտեմբեր ամիսին մէջը ծնունդէն առաջ եղած կիրակիներուն:

Առաջին, երկրորդ, ու չորրորդ կիրակի օրերը, տասը տարւան ու տասը քառսունքի ներողութի: Արրորդ կիրակի օրը, տասնըհինգ տարւան ու տասնըհինգ քառսունքի ներողութի:

Յսի քսի տն մերոյ ծնունդին օրերուն: Ճրագալուցին գիշերը՝ ու գիշերւան պատարագին, տասնըհինգ տարւան ու տասնըհինգ քառսունքի ներողութի: Մնունդին օրը, լիակատար ներողութի: Արկրորդ, երրորդ, ու չորրորդ օրերը, ու թլիատութե օրը, ու մկրտութե օրը, երեսուն տարւան ու երեսուն քառսունքի ներողութի:

Աբ սարգիսին պաքը լըմնցածին պէս, կարգաւ երեք կիրակի օրերը, երեսուն տարւան ու երեսուն քառսունքի ներողութի:

Աբ մարկոս աւետարանիչին օրը: ու համբարձումէն առաջ երեք օր, քի՛ երկուշաբթի, երեքշաբթի, ու

չորեքշաբթի, երեսուն տարւան ու
երեսուն քառսունքի ներողութի:

Իննէրորդ: Ղարձեալ՝ սրբազան
պապը բոլոր գրեած եղբայրներուն
աս օրերս ալ լիակատար ներողութի
չնորհեց ՚ի մշտնջենաւորս. քի՛նք
ամաճնայ ամենաքիչ յղութեանը,
ճնունդին, աւետումին, տէրընտա-
սին, ու վերափոխումին օրերը, ա-
սոնցմէ զատ՝ ամ քիչ տօնին օրը,
ամ ննջեցելոց օրը, քիչ հայր յով-
սէփին տօնին օրը, քիչ պետրոս և քիչ
պօղոս առաքեալներուն տօնին օրը,
ու քիչ յովհաննէս աւետարանիչին
տօնին օրը. մինակ թէ խոստովանանք
ըլլալէն ու սրբութի առնելէն ետքը՝
վերոյիշեալ եղբայրութիւնը եկեղե-
ցիին այցելութի պիտի ընեն: Ս ճի-
որ ՚ի 2. ապրիլ. 1805:

Տասնէրորդ: Աքի ամաճնայ ուրիշ
տօներուն օրերը, ու ուրիշ առա-
քեալներուն տօներուն օրերը, թի-
որ վերոյիշեալ եկեղեցիին այցելութի

ընելու ըլլան, եօթը տարւան ու եօթը քառասունքի ներողութի: Աճիւն՝
որ է 2. ապրիլէ. 1805:

Իրաւցրնէ առ ուլէրորդ, իննէ-
րորդ, ու քսանէրորդ համարներուն
մէջը յիշած ներողութիները շահե-
լու համար, վերոգրեալ եկեղեցիին
այցելութի ընելու է. սակայն սրբա-
զան պապը ուրիշ վճիռ մի ալ ըրած
է, որ հռովմային մէջը ու հռովմայէն
դուրս՝ ամեն հիւանդ եղող կամ ու-
րիշ օրինաւոր արգելք մը ունեցող
եղբայրները եբոր աս այցելութիը
չեն կրնար ընել, դարձեալ աս նե-
րողութիները շահին, մինակ թէ ա-
մեն մէկուն խոստովանահայրը՝ այ-
ցելութի ընելու տեղը ուրիշ ինչ
բարեպաշտ գործքի մը պարտաւո-
րութի դնելու որ ըլլայ, ան պար-
տաւորութիը կատարեն:

Սէփոսանէրորդ: Արովհետեւ
մարմնոյ և արեան տօնին ութերորդ
օրէն ետքը՝ առաջին ուրբաթ օրը՝

յսին ամենաւր սրտին տօնը կըկատարուի, ու ասկից ալ առաջ կարգաւ ինը օր աս տօնին իննօրեայ կըրթուածիը կըկատարուի. անոր հմբ աս ինը օրին ամեն մէկ օրը ո՛վ որ աս տօնը կատարուած եկեղեցիին այցելուածի ընելով՝ սրբազան պապին դիտաւորութեը աղօթք կընէ, եօթը տարւան ու եօթը քառսունքի ներողութիւն կըշահի: Աս ներողութիս ալ շնորհուած է ՚ի մշտնջենաւորս, անանկ որ քաւարանին սբ հոգիներուն օգնութեը համար ալ շահելու կարող են: Ա ճիտ՝ որ՝ է 4. Կարգ. 1806:

Երկրորդ անգամ: Սրբազան պապը բաղձալով, որ յսին ամենաւր սրտին աւելի շատ ջերմեռանդութի ընենք, յսին ամենաւր սրտին տօնէն առաջ վեց կիրակի կամ վեց ուրբաթ օրերուն ամեն մէկ օրը խոստովանանք եղող, սրբութի առնող, ու աս տօնը կատարուած եկեղեցիներուն մէկուն ջերմեռանդապէս այցելուածի

ընելով՝ սրբազան պապին դիտաւորութեբ աղօթք ընօղ ջերմեռանդներուն լիակատար ներողութի շնորհեց ՚ի մշտնջենաւորս, անանկ որ քաւարանին սբ հոգիներուն օգնութեբ համար ալ աս ներողութիբ շահելու կարօղ ըլլան: Աճիւ՝ որ ՚ի 4. Դարդի 1806:

Աս եղբայրութե գրեած հաւատացեալները, թէ որ օրինաւոր պատճառ մը ունենալով՝ եկեղեցիին այցելութի ընելու կարօղ չըլլան, նոյն վերոյիշեալ վճիռին ուժովը՝ վերի Դպրատան երոբ ու երկրորդ համարներուն մէջը իննօրեայ կրթութեբ համար ու վեց կիրակի կամ վեց ուրբաթ օրերուն համար գրեած ներողութիները նոյնպէս կրնան շահիլ. մինակ թէ ամեն մէկուն խօստովանահայրը՝ այցելութիւն ընելու տեղը ուրիշ ինչ բարեպաշտ գործքի մը պարտաւորութի դնելու որ ըլլայ, ան պարտաւորութիբ կատարեն:

Երէ՛ր Կոստանէ՛րոյդ : Պիտս եօթմ-
 ներորդ սրբազան պապը բաղձալով,
 որ սբ Թադէօնին աւելի շատ ջերմե-
 ռանդութի ընենք, թէ որաս եղբայ-
 րութե՛ գրւած եղբայրները՝ ամենամբ
 երրորդութե՛ շնորհակալութի ընելու
 համար՝ որ սբ Թադէօնին այնչափ
 շնորհքներ ու պարգևներ ըրած է՝
 մանաւանդ երկինքը վերափոխւած
 ատենը, առտանց՝ կէսօրին՝ ու իրիկ-
 ւան երէ՛ր Կոստ՛ հօր զրուցելու ըւ-
 լան, երեք հարիւր օրւան ներողու-
 թիւն, ու ամէն մէկ անգամուն ալ
 զատ զատ հարիւր օրւան ներողութի
 շնորհեց : Ասկից զատ, աս ջերմե-
 ռանդութիը կարգաւ ամիս մը՝ օրը
 երեքական անգամ ընելէն ետքը,
 ան ամսուն որ օրը որ ըլլայ՝ անգամ
 մը խոստովանանք եղօղ՝ սրբութի
 առնօղ ու սրբազան պապին դիտա-
 ւորութե՛ր աղօթք ընօղ եղբայրնե-
 րուն լիակատար ներողութի շնորհեց :
 Աս շնորհքս ալ ըրաւ ՚ի մշտնջենաւ

ւորս, անանկ որ քաւարանին սբ հոգիներուն օգնութեը համար ալ աս ներողութիը շահելու կարօղ ըլլան :
 ՍճԽ՝ որ 'ե 10. Ռեպուբլիկէն. 1814 :

Չորէ-բարսանէ-բորդ : Աշխարհս որ կողմը՝ ու որ եկեղեցին կըլլայ՝ թող ըլլայ, մինակ թէ ան եկեղեցին մէջը՝ յսին ամենասբ սրտին տօնը կատարւի, որ քրիստոնեայ՝ որ խոստովանանք ըլլալէն ու սրբութի առնելէն ետքը՝ ան եկեղեցին այցելութի կրնէ, ու հոն տեղը սրբազան պապին դիտաւորութեը աղօթք կրնէ, լիակատար ներողութի կըշահի, ինչպէս որ պիտս եօթներորդ սրբազան պապը շնորհեց 'ի մշանջենաւորս, անանկ որ քաւարանին սբ հոգիներուն օգնութեը համար ալ շահելու կարօղ ըլլայ : ՍճԽ՝ որ 'ե 7. յուլիէն . 1815 :

Աս եղբայրս-նք վերաբերեալ երկու
Գիտնալու Բան :

Սա : Հռովմ քաղքին մեջը՝ միա-
բանութի սբյն պողոսի առաքելոյ
ըսած կրօնքը կայ . ան կրօնքին քա-
հանաները՝ սուրբ անձանայ եկեղե-
ցիին մեջը՝ որ ին գաղիլա կըսւի՝
աս եղբայրութիւն հաստատեցին : Ա-
նոր համար պիտոս եօթներորդ սրբա-
զան պապը յամին 1803 . յունվարի .
25 . վճիռ ըրաւ , ան քահանանե-
րուն աս իշխանութիւն տըւաւ , որ
հռովմայէն դուրս աշխրքին ամեն
կողմը որչափ որ աս յնի ամենանք
սրտին եղբայրութենը կանոններուն
վրայ՝ նոյնպէս ՚ի պատիւ ամենանք
սրտին յնի ուրիշ եղբայրութի մը
հաստատուած է կամ հաստատուելու
ըլլայ , ան եղբայրութիւնները իրենց
հռովմայի եղբայրութենը միացընելու

կարող ըլլան, ուղղի հասկմայի եղ-
բայրութենը շնորհած ներողութիւնե-
րուն՝ ինչպէս որ վերը մէկիկ մէկիկ
գրինք՝ անոնք ալ մասնակից ըլլան :

Երկրորդ : Աս եղբայրութենը կա-
նոններուն մէջը եղած պայմաններուն
մէկն ալ աս է, որ աս եղբայրութեն
ննջեցեալներուն հոգիին հմբ ամսէ
ամիս երեք պատարագ զրուցւի . ու
պատարագը մատուցող քահանա-
ներն ալ՝ վերոգրեալ սբ պօղոս ա-
ռաքելոյն միաբանութիւնը պիտի սահ-
մանէ : Արդ՝ որչափ որ գրեած եղ-
բայր կայ, ամենուն ալ աս աղա-
չանքը կրնենք, որ ամենեին պար-
տաւորութի մը չունենալով՝ իրենց
յօժար կամքովը ամսէ ամիս ան ննջե-
ցեալներուն համար կամ անգամ մը
հաղորդըլին, կամ վարդարանին մէկ
մասը ըսեն, կամ ուրիշ բարեպաշ-
տական գործք մը ընեն : Իսկ եբոր
վախճանեալ եղբայրներուն անունը՝
հասկմայի եղբայրութեն մեծաւորնե-

բուն ահանջը կը հասնի, իսկոյն Եղ-
բայրութե մէջը ծանուցում կը լլայ,
ու գրքի մէջ կանցնի, որ իրենց հո-
գիին օգնութի լլայ:



